

«ԱՊԵՆԱԶԱՐՆԵՆ»

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՒՒՆԸ (ԱԿՆԱՐԿՆԵՐ)



Փորձնորդ, Ռոմ Եղեմ
2024

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ
(ԱԿՆԱՐԿՆԵՐ)

ՎԱՋԷ ԴԱՉԱՐԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ
(ԱԿՆԱՐԿՆԵՐ)

Բ. տպագրութիւն

Փորթամուրթ, Ռոտ Այլընտ

2024

Library of Congress Control Number: 2024901381

Author: Vatche Ghazarian, PhD

Title: *The Armenagan Political Party : Glances*
[*Armenakan Kusakts 'ut' iwně : Aknarkner*]

Language: Armenian

Subjects:

Armenian political parties
Armenian liberation movement in the Ottoman Empire
The first Armenian political party

Copyright © 2024 by Vatche Ghazarian
All Rights reserved under International and Pan-American Copyright Conventions.

Printed in the United States of America

ISBN: 978-1-931834-48-3
Mayreni Publishing, 2024

ՆԵՐԱԾԱԿԱՆ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Արմենական Կուսակցության դարադարձին առիթով Պեյրոնի «Չարթօնք» օրաթերթին 1985 թուականի Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներու համարներուն մէջ որպէս յօդուածաշարք լոյս տեսած եւ նոյն տարին Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Քարոզչական Յանձնախումբին կողմէ իբրեւ առանձին գրքոյկ «Չարթօնք» տպարանէն հանրութեան յանձնուած այս ուսումնասիրութեան երկրորդ տպագրութիւնը իր արդարացումը կը գտնէ առաւելաբար այդ թուականէն ետք լոյս տեսած գրականութեամբ: Երկրորդական պատճառ կարելի է նկատել նախնական հրատարակութեան տպագրական անգոհացուցիչ որակը եւ յստակ թուայնացեալ օրինակ մը շրջանառութեան մէջ դնելու փափաքը:

Ակնարկուած գրականութիւնը կ'ընդգրկէ մասնաւորաբար Միքայէլ Նաթանեանի «Արմենական Կուսակցութիւնը» աշխատութիւնըⁱ եւ Փանոս Թերլեմեզեանի յուշագրութիւնըⁱⁱ: Երկու հեղինակներն ալ ծնած են Վան եւ ժամանակակից եղած են Արմենական Կուսակցութեան կազմաւորման շրջանին ու գործունէութեան, ճաշակած են բանտարկութիւն իրենց կուսակցական պատ-

ⁱ Նաթանեան Միքայէլ, «Արմենական Կուսակցութիւնը. Ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան կազմութիւնը», խմբագրութիւն եւ ներածութիւն Տիգրան Գեորգեանի, Գահիրէ, 1990:

ⁱⁱ Թերլեմեզեան Փանոս, «Կեանքիս յուշերը», յառաջաբան և ծանօթագրութիւններ Երուանդ Տէր-Խաչատուրեանի, հրատ. «Թեքլեան» Մշակութային Միութեան, Երեւան, 2017:

կանելութեան համար եւ որոշ տարիներ հեռու գտնուած արմենականներու գործունէութեան հիմնական դաշտերէն:

Թերլեմեզեանի պարագային, պէտք է նկատի ունենալ թէ ան իր յուշերը գրի առնել սկսած է 1938-ին՝ ստալինեան եղեռնագործական տարիներու խեղդիչ միջավայրին մէջ, ջանալով իր «փոթորկալից կեանքին, միջավայրին եւ ժամանակաշրջանի մտայնութեան» վերաբերեալ իր նպատակը իրագործել նկատի ունենալով «ժողովուրդին շահերն» ու զանոնք պարուրելով նոր «ժամանակաշրջանի շունչով» (էջ 23): Այդ շունչը որոշապէս պատճառ դարձած է կարգ մը էջերու մէջ ընթերցողին հանդիպող բռնագրօսիկ դատումներու:

Հարկ է նաեւ նշել թէ որոշ դրուագներու պատումը յստակօրէն ագուցուած չլլալով տարեթիւերու, մեզ կը կանգնեցնէ շփոթութիւններու դիմաց: Օրինակ, 1891-ի ամրան իր դէպի Ճատախ ուղեւորութեան մասին արտայայտուելէ ետք, Թերլեմեզեան, առանց թուական նշելու, կը պատմէ Մկրտիչ Աւետիսեանի հետ իր հանդիպման մասին, որ տեղի ունեցած պէտք է ըլլայ 1891-ի աշնան՝ դատելով իր այն տեղեկութենէն, թէ Ճատախէն Վան վերադարձէն մէկուկէս ամիս ետք ստացած է Սալմաստ մեկնելով Աւետիսեանի հետ հանդիպելու հրաւերը: Երկու ենթաբաժին ետք, սակայն, յուշագրողին Վան վերադարձի դրուագին մէջ, կը հանդիպինք 1890-ի Դեկտեմբեր թուականին (էջ 131, 135 եւ 141): Պարագան կրնայ թերեւս արդիւնքն ըլլալ բնագրին հրատարակութեան պատրաստութեան ընթացքին թոյլ տրուած սխալի մը (այլ սխալներու կարգին), բայց հարց կ'առաջանայ թէ Աւետիսեանի հետ տեսակցութիւնն ու այդ առիթով արձանագրուած տողերը կը վերաբերին 1890-ի՞ն, թէ՞ 1891-ին: Այդ հանդիպման ընթացքին Աւետիսեան կը թելադրէ ծայրայեղ գգուշաւոր պատրաստութիւն, որպէսզի թուրքերը ոչինչ կռահեն, եւ յոյս չդնել դուրսի օգնութեան, «մանաւանդ՝ եւրոպացւոց խոստումների վրայ» (էջ 135):

Թերլեմեզեան, որ ակնարկած է արհեստավարժ յեղափոխական մը ըլլալու, այսինքն՝ կազմակերպող, քարոզող, ինչպէս նաեւ տատանող տարրերը կայունացնելու եւ ոստիկանական հետապնդումներէ խուսափելու կերպերը գիտնալու ձգտումի մը (էջ 95), որուն իբրեւ հետեւանք իր քայլերն ուղղած ըլլալ կը թուի դէպի

արմենականություն, պահը բնորոշած է որպես «գաղափարական ու կազմակերպչական խառնաշփոթության ժամանակաշրջան» եւ դեռ նշած՝ թէ ինք եւ իր նման «ռոմանտիկ երագողներ» առանց որոշ ծրագրի, տարերայնօրէն կը խիզախէին մշուշի մէջ, անորոշութեան մէջ խարխափող «ռոմանտիկ ուսուցիչներու» հետ, որոնց համար ալ պարզ չէին պայքարին վերաբերող կենսական խնդիրներ (էջ 101):

Արմենական դէմքերու եւ շարք մը իրադարձութիւններու վերաբերեալ իր գրառումները կը համապատասխանեն այլ աղբիւրներէ յայտնի տեղեկութիւններու, բայց նաեւ մտածել կու տան իր կարգ մը հաստատումներուն ճշգրտութեան մասին:

Իր շարահիւսումներուն մէջ կը տեսնենք ստուերը Լեոյի «Անցեալից» հատորինⁱⁱⁱ, մասնաւորապէս «Կուսակցութիւնները» խորագրեալ ենթաբաժնին մէջ^{iv}:

Մեզ հետաքրքրող նիւթին անմիջականօրէն առնչուող տեղեկութիւններուն վրայ կեդրոնանալով, կը պարզենք թէ Թերլեմէզեան կառավարական հսկողութենէ խուսափելու համար կը մեկնի Մուշ, ուր ենթադրաբար 1889-ին Ստեփան անունով կրակոտ երիտասարդի մը հետ կը դնէ «առանց անունի յեղափոխական կազմակերպչութեան հիմքը», երբ «տակաւին ոչ մի յեղափոխական կուսակցութեան ներկայացուցիչ այդ կողմերը չէր եկած» (էջ 104): Այլ աղբիւրի մէջ, սակայն, կը նշուի թէ արմենական Հայրապետ Ճանիկեան, զոր աքսորէ փրկելու համար Վանի երեւելիները քահանայ ձեռնադրել տուած էին Մեսրոպ անուամբ, 1886-ին արդէն հաստատուած էր Մուշ, Միհրան Տամատեանի եւ այլ երիտա-

ⁱⁱⁱ Լեօ, «Անցեալից. Փաստաթղթեր, Դատումներ», հրատ. «Խորհրդային Կովկաս»-ի, Թիֆլիս, 1925:

^{iv} «Անցեալից», էջ 85–87 ընդ «Կեանքիս յուշերը», էջ 149–150: Ի դէպ, վերջինին 149-րդ էջին մէջ վերակազմեալ հնչակեան Մարդուկէսեանի մականունը դարձած է Մարտուկէսեան, «Վարդապետարան Հայաստանի» գրքոյկը ներկայացուած է իբրեւ «Վարդապետական Հայաստանի», զոր Թերլեմէզեանը գնահատած է իբրեւ «չափազանց միամիտ եւ ազգայնական թեզիսներով» զանգուածներն առաջնորդելու հազիւ ի վիճակի ծրագրային նիւթ մը:

սարդի մը հետ հիմնած էր Մուշի կեդրոնական դպրոցին կազմը, ինչպէս նաեւ Մշոյ արմենական մասնաճիւղը^v:

Թերլեմեզեան կը հաստատէ թէ 1890-ին Վանէն դուրս հնչակեաններն ամենաուժեղ կուսակցութիւնն էին, բայց Վանի բնակչութեան ստուար մեծամասնութիւնը, ինչպէս այլ աղբիւրներու մէջ նշուած է, արմենական էր: Նաեւ կը յայտնէ թէ որպէս Արմենական կը ճանչցուէին բոլոր անոնք, որոնք աշակերտած էին Վանի կեդրոնական վարժարանին, ինչպէս նաեւ անոնք, որոնք կապ ունէին «Արմէնիա» թերթին հետ կամ անդամ էին [Հայոց] Հայրենասիրական Միութեան (էջ 148–149): Կը սխալի, սակայն, ան, կ'աւելցնէ. «Արմենական ազգայնական կուսակցութեան իսկական ծրագիրը կազմուել է Վանում 96-ի կռիւների ժամանակ Մկրտիչ Թերլեմեզեանի ղեկավարութեամբ»: Ինչպէս մեր ուսումնասիրութեան արմենականներու ծրագրին վերաբերող ենթաբաժնին մէջ նշած ենք, արդէն գոյութիւն ունէր ծրագիր մը եւ այդ ծրագրին բարեփոխման կամ վերամշակման փորձը ծրագրուած էր կատարել 96-ի հերոսամարտի նախօրեակին: Դժուար է պատկերացնել թէ այդպիսի փորձ կրնար ըլլալ «կռիւներու ժամանակ»:

Անցնելով Նաթանեանի 1933-ին մշակուած աշխատութեան, Արմենական Կուսակցութեան՝ իր բառերով «պաշտօնական սկզբնաւորութեան» նախօրեակին տիրող մթնոլորտին ակնարկելով եւ զայն բնորոշելով որպէս «երջանիկ անգիտութեան շրջանը մեր հայ-քաղաքական կեանքին», Թերլեմեզեանի նման վերապահութիւն կը ցուցաբերէ ժողովուրդը վարողներուն հանդէպ, անոնցմէ շատերը անկարող նկատելով «ճշգրտօրէն նախատեսելու բոլոր ծանրակշիռ դէպքերը», եւ հետեւաբար «կիսատ» կամ «ապարդիւն» նկատելով անոնց ճիգերը «Թրքահայաստանի ազատագրութեան տեսակէտով»^{vi}:

^v Տէր Մկրտիչեան Երուանդ, «Գանձեր Վասպուրականի», հտ. Ա., Պոսթոն, 1966, էջ 294, 296 եւ 626:

^{vi} Նաթանեան, նշ. աշխ., էջ 5: Դիտել տանք թէ Նաթանեանի բնագրին հրատարակեալ օրինակին մէջ եւս սողոսկած են գրաշարական սխալներ, որոնցմէ *Շատուորեանի* փոխարէն *Շատուտեանը* (էջ 7)

Ինչ կը վերաբերի կուսակցութեան կազմաւորման, իրաւամբ անհրաժեշտ տուրքը տալով հանդերձ «Արմէնիա» թերթին դերակատարութեան, Նաթանեան կը նշէ եւ կը կրկնէ ալ երկու անգամ թէ Փորթուգալեան ուղղակի կազմողը եւ հիմնադիրը չեղաւ «Արմենական» կուսակցութեան (էջ 11, 13 եւ 41): Ան նաեւ երկիցս արմենականութեան յղում կը կատարէ իբրեւ *գաղափարակցական միութիւն*, երրորդ առիթով մը եւս յուշելու համար նոյնը առանց այդ բառակապակցութեան, երբ մասնաւորապէս կը գրէ կուսակցութեան սկզբնական քայլերուն մասին (էջ 11, 17 եւ 20), ինչ որ բնական երեւոյթ մըն է որեւէ կազմակերպութեան ծննդոցի պարագային:

Յատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնեն Նաթանեանի հաղորդած տեղեկութիւններն ու կատարած դատումները Վանայ մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սկզբնաքայլերուն եւ տարածման մէջ արմենականներու ունեցած դերին ու այնուհետեւ երկու կուսակցութիւններուն միջեւ ստեղծուած կացութեան վերաբերեալ:

Նաթանեան կը հաղորդէ թէ իր ծրագրով եւ գործունէութեամբ ամենէն իրատեսը եղած Արմենական Կուսակցութիւնը «քիչ միջոցի մէջ անսպասելի ծաւալում մը ունեցաւ Վանայ, Վասպուրականի եւ Պարսկահայաստանի (Դաւրէժ-Սալմաստ-Ուրմի) շրջանակին մէջ» (էջ 14-15): Աւելի ուշ, Նաթանեան յղում կատարելով Փորթուգալեանի աշակերտներուն Կեդրոնական վարժարանի փակումէն ետք Կիրակնօրեայ վարժարանի հետեւորդներուն, կը գրէ. «Անոնք ... լաւագոյն ատաղձներ հանդիսացան, իրականին մէջ արդէն մարմին առած եւ գոյութիւն ունեցող, բայց կազմակերպօրէն դեռ սաղմնաւորուելու վրայ եղող ԱՐՄԵՆԱԿԱՆ կուսակցութեան՝ որ շատ չանցած ... իր մէջ ընդգրկեց թէ՛ Վանայ եւ Վասպուրականի եւ թէ՛ Ատրպատականի ... բովանդակ մտաւորականութիւնը եւ երիտասարդութիւնը, երբ դեռ այդ վայրերուն մէջ Հնչակեաններ

թէւ սրբագրուած է վրիպակներու ցանկին մէջ, բայց *Արիկեանը*, որ պէտք է ըլլայ *Այիկեան* (էջ 7), դուրս մնացած է վրիպակներու ցանկէն, թէւ աւելի ուշ յիշատակուած է ճշգրտօրէն:

ճանչցուած չէին ու Դաշնակցութիւնը կազմուած չէր» (Էջ 20): Նաթանեանի նման վանեցի եւ հետագային սահմանադրական ապա ազատական ռամկավար դարձած ուրիշ ազգային դէմք մը՝ Թերզիպաշեան, պիտի արձանագրէր. «... 1889ին ... դեռ քաղաքական կուսակցութիւնները գոյութիւն չունէին եւ Արմենականութիւնը, հեռու իրական կուսակցութիւն մը դառնալէ, տակաւին իր սաղմին մէջ պարզ կազմակերպութիւն մըն էր միայն»^{vii}: Կը տարուինք խորհելու թէ իր կուսակցականութեան համար 1887-ին աքսորուած Նաթանեանի հաստատումը կը մնայ աւելի հաւաստի ու ճշգրիտ: Կը տարուինք նաեւ մտածելու թէ անադմուկ պատրաստութեան հաւատացող արմենականներն իբրեւ կազմաւորուած կազմակերպութիւն կամ կուսակցութիւն կրնային իրենց ներկայութիւնը բացայայտելու մղուած ըլլալ միւս կուսակցութիւններու երեւան գալէն ետք, երբ առաջացած էր հարկը զատորոշման: Այլ խօսքով, կազմակերպութեան չյարած անձեր կրնային լաւատեղեակ չըլլալ կամ բոլորովին անտեղեակ ըլլալ:

Կը մնայ նշել թէ յաջորդող Էջերով 1985-ին լոյս տեսած ուսումնասիրութեան ներկայացուող բնագրին թիւ 34 ծանօթագրութեան մէջ ներմուծած ենք յաւելեալ տեղեկութիւն մը:

^{vii} Թերզիպաշեան Աւետիս, «Նուպար», տպ. Ա. Տէր Յակոբեան, Փարիզ, 1939, էջ 18:

Տարակոյս չկայ՝ թէ շատ բարդ եւ վտանգալից էին մեր
պայմանները, որոնց չէին զօրեր աչքը առաջին անձնուէր
յեղափոխականներուն, որոնք բաւական կը նկատէին նուիրումը՝
Հայրենիքին սրբազան ազատագրութիւն ձեռք ձգելու համար:

... մենք [հայերս]՝ առ հասարակ, շատ թերի գաղափար մը լոկ
ունէինք մեր թշնամիին զօրութեան եւ տիրող քաղաքական
պայմաններուն մասին:

Այսպէս ըլլալով հանդերձ, անիրաւ պիտի ըլլար գրչի մէկ
հարուածով անտեսել բոլոր ասոնք, անտեսել տիրող
մտայնութիւնը եւ զայն ծնող ներքին եւ արտաքին ազդակները,
ուրանալ Հայկական Ծարժումին գէթ բարոյական մեծ արժէքը՝
մեղադրանքի ներքեւ թաղելու համար անոնք, որոնք հայ դատին
նուիրուեցան, որոնք իրենց կեանքը եւ հարստութիւնը կամովին
գոհաբերեցին (ինչ կուսակցական դրօշի տակ ալ ըլլայ,
կուսակցական թէ անկուսակցական) Հայրենիքի
ազատագրութեան սեղանին վրայ գերագոյն խտելալ մը մղուած:

Քննադատելի պէտք է գտնել միայն անցեալ եւ ներկայ դառն
փորձառութիւններէն օգտակար եւ հրահանգիչ դասեր չուզելը եւ
փորձուած ու վնասակար տեսնուած սխալներու վրայ յամառած
մնալը...:

Միքայէլ Նաթանեան

ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ

Արմենական Կազմակերպության կամ Կուսակցության անդրադարձող այս համեստ ուսումնասիրության մէջ մենք կը մեկնինք սահմանափակ առաջադրանքներէ՝ առաւելաբար գոհանալով զանազան տպագիր աղբիւրներու մէջ արձանագրուած տեղեկութիւններով, որոնք հիմնականին մէջ կը վերաբերին արմենականներուն Վան եւ Ատրպատական ունեցած գործունէութեան:

Հնարաւորութիւնը չենք ունեցած աչքէ անցընելու՝ ա. Մկրտիչ Փորթուգալեանի «Արմէնիա»ն, ուր վստահաբար կարելոր տեղեկութիւններ պէտք է ըլլան արմենականներու մասին, բ.- Արմենականներու խմորատիպ հրատարակութիւնները, գ.- Հայաստան գտնուող արխիւային նիւթերը, դ.- Չանազան պետութիւններու արտաքին գործոց նախարարութիւններու արխիւները:

Այդ արխիւային նիւթերը իրենք ալ հաւանաբար ակնկալուածին չափ հարուստ ու ամբողջական պատկեր մը տալէ հեռու են, որովհետեւ արմենականներու գործունէութիւնը արտացոլացնող փաստաթուղթերուն հիմնական մէկ մասը փնացած կամ թուրքերուն ձեռքը անցած է 1896ին, երբ նահատակեալ կուսակցապետ Մկրտիչ Աւետիսեան Վանի հերոսամարտէն ետք զանոնք հետն առած կը փորձէր անցնիլ Պարսկաստան:

Ուրիշ ցաւալի իրողութիւն մըն է այն, որ կուսակցութեան գլխաւոր հիմնադիրներէն ու գործիչներէն մին՝ Գրիգոր Պէօզիկեան (Շիկահեր), հայ առաջին քաղաքական կուսակցութեան մասին պատմագրական իր առաջին ընդարձակ փորձին արդիւնքը հարկադրաբար թողած է Ռոստով, հոնկէ Թեհրան տեղափոխուելու շրջանին. իսկ երկրորդ փորձին ձեռնարկելէ կարճ պահ մը ետք

մահացած է Թեհրանի մէջ, առանց այդ փորձը կարենալ լոյսին տալու (եւ թերեւս ալ առանց ամբողջացնելու): Ակնարկուած զոյգ փորձերուն ճակատագիրը ցարդ կը մնայ անորոշ: Միայն իմացած ենք թէ Շիկահերի մահէն անմիջապէս ետք կորսուած են անոր ձեռագիրներն ու թերթերու հաւաքածոները...:

Արմենականութեան պատմութիւնը գրելու այլ փորձ մը կատարած է արմենական մարտիկ Անուշաւան Տէր Մկրտիչեան Մ. Նահանգներու մէջ. սակայն այդ փորձին ճակատագիրը եւս անձանօթ կը մնայ մեզի:

Հակառակ, սակայն, այս իրողութիւններուն, Արմենական Կուսակցութեան հիմնադրութեան 100-ամեակին առիթով պէ՛տք է ձեռնարկուէր այս ուսումնասիրութեան, հոգ չէ թէ չափազանց վտիտ աղբիւրներէ մեկնելով, յուսալով որ ամբողջական ուսումնասիրութեան գլխաւոր փորձը կատարուի Մայր Հայրենիքի մէջ (հանգուցեալ պատմաբան Հ. Գ. Վարդանեան իր «Արեւմտահայերի ազատագրութեան հարցը» հատորին մէջ, Երեւան, 1967, ըրած է տասը մամուլ ծաւալով արմենականներուն նուիրուելիք մենագրութեան մը խօսքը):

Ու թէեւ պատմագրական որեւէ լուրջ ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ ուսումնասիրելի երեւոյթին ծնունդ տուող պատճառներուն ու պարագաներուն, մեր այս փորձին մէջ այդ ճիգը զանց պիտի առնուի դիտմամբ:

* * *

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1884ի ամրան, Մկրտիչ Փորթուզալեան Վանայ մէջ իր հիմնած Վարժապետանոցին շրջանաւարտներուն ի պատիւ ճաշկերոյթ մը տալէ յետոյ, 12 շրջանաւարտներուն հիմնել կու տայ *Գործակցական Միութիւն* անունով ընկերութիւն մը, որուն անոնցմէ իւրաքանչիւրը կը յատկացնէ երեք օսմանեան ոսկի դրամագլուխ:

Միութեան նպատակն էր Պոլսէն ու Ֆրանսայէն բերել տալ դասագիրքեր, գրենական պիտոյքներ եւ ընթերցանութեան գրքեր՝ զանոնք փոքր շահով վաճառելու դպրոցական վարչութիւններու եւ ընթերցասէր հայորդիներուն: Այլ խօսքով՝ միտում կար զարկ տալու ժողովուրդին մտաւոր զարգացման¹:

Այդ 12 շրջանաւարտներն էին՝ Մկրտիչ Թերլեմեզեան (Աւետիսեան), Գրիգորիս Թերլեմեզեան, Ռուբէն Շատուորեան, Գէորգ Օտեան², Գրիգոր Աճեմեան, Մաքնոս Պարուրճեան, Ղեւոնդ Խանջեան, Գրիգոր Պէօզիկեան (Շիկափեր), Գարեգին Բաղէշցեան (Մանուկեան), Գաբրիէլ Նաթանեան, Գալուստ Ասլանեան եւ Եղիշէ Զոնտաքճեան (Ղոնտախչեան կամ Գունտաքճեան եւս):

Բայց այդ երիտասարդ շրջանաւարտները կը ձգտէին աւելիին՝ մեկնելով արեւմտահայութեան վիճակէն ու կարիքներէն, մանաւանդ որ իրենց միտքերուն մէջ խորապէս դրոշմուած էր Խրիմեան Հայրիկի *երկայթեայ շերտի*ի քարոզը եւ իրենց պատանեկան տարիներուն խանդավառուած էին Վանի մէջ կազմակերպուած զանազան գաղտնի խմբակցութիւններու գործունէութեամբ: Անոնք

¹ Տես՝ Գ. Պէօզիկեանի «Խարի տուն» գրութիւնը, «Արծուի Վասպուրական» ամսագիր, 1941, թիւ 4, էջ 2:

² Կարգ մը աղբիւրներու մէջ յիշատակուած է Գրիգոր անունով, բայց Գէորգ է իր իսկական անունը:

իրենց ապագայ գործունեությունը ծրագրելու եւ յառաջ տանելու համար պետք ունեին հաւաքավայրի մը, որ հեռու ըլլար թուրք ոստիկաններու խիստ հսկողութենէն եւ ուր կարելի ըլլար գիշերել:

Այդպիսի հաւաքավայր մը կը դառնայ Մկրտիչ եւ Գրիգորիս Թերլեմեզեաններու հօրենական այգիին հնձանը, որուն միակ կահաւորումը կազմելով գետնի հնամաշ խսիրը, հաւաքատեղին կը կոչուի *Խարի Տուն*:

Հոն կը յաճախէին վերոյիշեալ 12 շրջանաւարտներէն առաջին ինը (որովհետեւ Գալուստ Ասլանեան եւ Գաբրիէլ Նաթանեան մեկնած էին Պոլիս՝ համապատասխանաբար իբրեւ բժշկագիտութեան եւ իրաւաբանութեան ուսանող. իսկ Եղիշէ Քոնտաքճեան անցած էր Բաղէշ՝ տեսչական պաշտօնով), 1885ին Կեդրոնականէն շրջանաւարտ ըլլալիքները եւ Յովհաննէս Ագրիպասեանը, Փանոս Թերլեմեզեանն ու Մանուկ Շատուորեանը³:

Խարի Տան մէջ է որ կ'որոշուի՝ Ազգային Սահմանադրութեան տրամադրութիւններուն համաձայն՝ վերակազմել Վանի պաշտօնական մարմինները, ինչպէս նաեւ վերաբանալ կիրակնօրեայ վարժարանները,– որոնց նախաձեռնարկ եղած էր Մ.Փորթուգալեան,– Վանի երիտասարդութիւնը դաստիարակելու մտահոգութեամբ:

Հաւաքի մասնակիցները նոյնպէս կ'որոշեն Պարսկաստանի խողովակով կապ հաստատել հայաշատ գլխաւոր կեդրոններու (Թիֆլիս մանաւանդ) հետ՝ ձեռք բերելու ազատաշունչ գրականութիւն:

Յարաբերութիւնները աւելի կանոնաւոր դարձնելու համար՝ Մանուկ Շատուորեան յանձն կ'առնէ պատրաստել թղթատար աղաւնիներ

Ահա այսպիսով է որ Խարի Տունը կը դառնայ հայկական առաջին քաղաքական կուսակցութեան՝ Արմենական Կազմակերպութեան առաջին օրրանը⁴:

Եւ թէեւ, ինչպէս կը տեսնուի, այդ Տան հաւաքներուն կը մաս-

³ Պէօգիկեան Գր., նոյն, էջ 3:

⁴ Երուանդ Տէր Մկրտիչեան, «Գանձեր Վասպուրականի», հտ. Ա., Պոսթոն, 1966, էջ 496:

նակցելին սկզբնական շրջանին աւելի քան երկու տասնեակ երիտասարդ ուժեր, Արմենական Կուսակցութեան գլխաւոր հիմնադիրներ կը ճանչցուին վերոյիշեալ 12 շրջանաւարտներէն առաջին ինը հոգիները՝ իբրեւ պարագլուխ ունենալով Մկրտիչ Աւետիսեանը. իսկ իբրեւ կուսակցութեան հիմնումի թուական կը նշուի 1885-ի աշունը, երբ Փորթուգալեան արդէն հաստատուած էր Մարսէլյ եւ Օգոստոսին ձեռնարկած «Արմէնիա» թերթին հրատարակութեան:

Կուսակցութեան հիմնադրութիւնը այսպէս չեն ներկայացուցած, սակայն, մեր ազատագրական շարժումներուն անդրադարձող հեղինակները ընդհանուր առմամբ:

Անոնք մեծ մասամբ, յաճախ ալ զիրար կրկնելով, Արմենականութիւնը բխեցուցած են Փորթուգալեանի հիմնած Հայոց Հայրենասիրական Միութենէն⁵. տարբեր հարց որ Հ. Հ. Մ.ի հիմնադրութեան տարելիսին շուրջ տեսակէտներու նոյնութիւն գոյութիւն չունի եւ ընդհանրապէս փաստերը ցոյց կու տան թէ ան կազմուած է Արմենական Կուսակցութեան հիմնադրութենէն ետք...:

Բայց ուրկէ՞ այս շփոթը:

Անկէ՞ որ արմենականները յատկապէս Վասպուրականի եւ Ատրպատականի մէջ գործած են Հայոց Հայրենասիրական

⁵ Լէօ, «Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը», հատոր Ա., Փարիզ, 1934, էջ 144: Լազեան Գաբրիէլ, «Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր)», Գահիրէ, 1946, էջ 105–108: Մերոբեան Մուշեղ, «Հայկական Հարցը եւ անոր փուլերը», Պէյրութ, 1937, էջ 98–99 եւ «Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով», Գահիրէ, 1948, էջ 184: Իզմիրլեան Կարապետ, «Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս», Պէյրութ, 1964, էջ 124–126: Վարդանեան Համօ, «Արեւմտահայերի ազատագրութեան հարցը եւ հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում», Երեւան, 1967, էջ 287: Փափագեան Վահան, «Իմ յուշերը», հատոր Ա., Պոսթոն, 1950, էջ 130: Կիրակոսեան Ջոն, «Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.)», Երեւան, 1980, էջ 245: Երամեան Համբարձում, «Յուշարձան Վան-Վասպուրականի», հատոր Ա., Աղեքսանդրիա, 1929, էջ 255: Գազանճեան Լեւոն, «Վերածնունդ Վան-Վասպուրականի», Պոսթոն, 1950, էջ 210, ելմ.:

Միութեան անունով⁶։ Բացառուած չէ որ հոս դեր մը ունեցած ըլլայ այն իրողութիւնը, որ Մկրտիչ Աւետիսեան 1889-ին շունչը Մարսէլյ առնելէ ետք որպէս Հ. Հ. Մ.ի գործիչ-քարոզիչ այցելած է եւրոպական զանազան քաղաքներ ու Միացեալ Նահանգներ, ուր, ի դէպ, Հ. Հ. Մ.ի մասնաճիւղերու կողքին հաստատած կրնար ըլլալ նաեւ Արմենական Կուսակցութեան օժանդակ մասնաճիւղերը։ Գալով Վասպուրականի եւ անոր սահմանամերձ շրջաններուն, ամբողջովին գաղտնաբար գործող արմենականները հաւանաբար պիտի ուզէին օգտագործած ըլլալ Հ. Հ. Մ.ի պիտակը, անոր շուրջ հաւաքուած տարրերէն առաւել աչքառուններն ու յարմարները հետզհետէ ներգրաւելու Արմենականութեան շարքերը։

Հ. Հ. Մ.ն արմենականներու համար եղած է քօղածկոյթ մը միայն, եւ սխալ է զայն նոյնացնելը Արմ. Կուսակցութեան հետ կամ նոյնիսկ զայն նկատելը իբրեւ ծնուցիչ հայ քաղաքական առաջին կազմակերպութեան։

Եզրակացնելով՝ առաջին հայ քաղաքական կուսակցութիւնը՝ Արմենական Կազմակերպութիւնը,– որ նաեւ եղաւ Արեւմտահայաստանի մէջ ծնունդ առած⁷ առաջին ու վերջին կուսակցութիւնը,– կեանքի կոչուած է Վանի մէջ, Մկրտիչ Աւետիսեանի գլխաւորութեամբ, 1885-ի աշնան⁸, իբրեւ կորիզ ունենալով Մ. Փորթուգալ-

⁶ Արմենակ Եկարեան, «Յուշեր», Գահիրէ, 1947, էջ 40։

⁷ Խ. Բարսեղեան իր «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» աշխատութեան Ա. հատորին մէջ (Երեւան, 1967, էջ 164) զարմանալիօրէն կը գրէ. «Ծնունդ առնելով արտասահմանում, արմենականութիւնը իր թելերը ձգեց Վասպուրականում...»։ Նման հաստատում մը բոլորովին հիմնագուրկ է։ Արմենական Կուսակցութիւնը կը մնայ միակ *եղկրածին* կուսակցութիւնը եւ այս իրողութիւնը հաստատուած է յուշագրողներուն եւ պատմաբաններուն կողմէ անխտիր։ Բարսեղեան բացառութիւն կը կազմէ...։

⁸ Արսէն Կիտուրի խմբագրած «Պատմութիւն Մ. Դ. Հնչակեան Կուսակցութեան» գործին Ա. հատորին մէջ (Պէյրութ, 1962), սխալմամբ նշուած է թէ Աւետիսեան Փորթուգալեանի հետ արտասահմանի մէջ տեսակցելէ յետոյ կը վերադառնայ Վան ու կը հիմնէ Արմենական Կուսակցութիւնը։ Ծանօթ է թէ Աւետիսեան մինչեւ 1886 գտնուած է

եանի նախաձեռնութեամբ կազմուած Երկրագործական Միութիւնը:

* * *

Վան, այնուհետեւ անցած է Պարսկաստան, ապա, 1889-ին, արքորի ճանապարհին փախուստ տալով, դիմած է Մարսէյ, տեսակցած Փորթուգալեանի հետ եւ երկար թափառումներէ ետք, 1895-ին վերադարձած Վան...: Գիրքը կը պարունակէ այլ սխալ տեղեկութիւններ ալ Հ.Ս.Ռ.Կ.ի ու Ռ.Ա.Կ.ի կազմութեան շուրջ (էջ 320–321), որոնց անդրադառնալը դուրս կը մնայ մեր ներկայ փորձին սահմաններէն:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ

Կուսակցության հիմնադիրները, բոլորն ալ հաւատացող գաղտնի եւ անաղմուկ գործունէութեան բարիքներուն, կը թուի թէ սկզբնապէս անուն չէին ճշդած կազմակերպութեան համար: Արդէն Եկարեանն ալ, ինչպէս տեսանք, կը նշէր թէ կազմակերպութիւնը կը գործէր Հայոց Հայրենասիրական Միութեան անունով: Սակայն Վասպուրականի եւ Ատրպատականի հայութիւնը,- հաւանաբար նկատի ունենալով որ կազմակերպութեան յարած անդամները ստանձնած էին Փորթուգալեանի «Արմէնիա» թերթին ցրուումը եւ որոշ չափով դարձած անոր միտքերուն տարածիչը,- կուսակցութեան անդամները ճանչցաւ իբրեւ *արմէնիականներ*, եւ այդպիսով է որ շարժումն ինքզինք անուանեց նախ *Արմէնիական* եւ ապա *Արմենական Կազմակերպութիւն*:

Այս անուանակոչումը հետեւած է Հնչակեան Կուսակցութեան Արեւմտահայաստան ու Ատրպատական թափանցումին, որ, անկասկած, պիտի յառաջացնէր գործող կազմակերպութիւնները իրարմէ զատորոշելու հարկը:

Կուսակցութիւնը, մեզի հասած Ծրագրին հիման վրայ, թէեւ ինքզինք պաշտօնապէս կը կոչէր *Արմենական Կազմակերպութիւն*, բայց հիմնադիրներուն թէ անդամներուն միտքին մէջ *կազմակերպութիւն* բառը հաւասարագոր էր *կուսակցութիւն* բառին, եւ արդէն նոյն Ծրագրին մէջ կը հանդիպինք *Արմենական Կուսակցութիւն* արտայայտութեան ալ⁹: Հետեւաբար, անհիմն են այն տեսակէտները՝ թէ Արմենականութիւնը կուսակցութեան մը ստորոգելիներէն

⁹ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 83:

զուրկ կազմակերպություն էր եւ կամ կուսակցություն չէր:

Ան իրեն յատուկ Ծրագիրով եւ հիմնական թէ ներքին կանոնագիրներով իսկական քաղաքական կուսակցություն էր՝ օժտուած կուսակցութենէ մը պահանջուող հիմնական ստորոգելիներով:

* * *

ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ, «ԱՐՄԷՆԻԱ», ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կարգ մը ուսումնասիրողներ կամ հեղինակներ յայտնած են այն կարծիքը՝ թե Արմենական Կուսակցութիւնը յառաջացած է Մկրտիչ Փորթուգալեանի ղեկավարութեամբ, եւ թե «Արմենիա»-ն եղած է կուսակցութեան պաշտօնական օրկանը:

Իրականութեան մէջ Փորթուգալեանը կարելի է նկատել միայն հոգեւոր հայր մը Արմենականութեան, որուն հիմնադիրները թրծուած էին Փորթուգալեանի Վարժապետանոցին եւ Կեդրոնականին ազատասիրական հնոցներուն մէջ:

Փորթուգալեան սկիզբէն եւեթ ժխտած է Արմենականութեան հետ բարոյականէ տարբեր կապակցութիւն մը ունենալը¹⁰: Աւելին՝ ան յստակօրէն յայտարարած է թէ ինք երբեք չէ կազմակերպած յեղափոխական կուսակցութիւն մը «Արմենիա» անունով¹¹:

Արմենականներու եւ Փորթուգալեանի իրարու հետ ունեցած կապին տեսակէտով ուշագրաւ է Արտակ Դարբինեանի գրոյցը Մ. Աւետիսեանի հետ: Աւետիսեան, դրուատելէ ետք Փորթուգալեանը իբրեւ ազնիւ ու հայրենասէր անձ մը, որ իր հայրենասիրական գաղափարներով եւ դաստիարակութեամբ ճակատագրական դեր կատարած է Վանի երիտասարդութեան համար, կ'աւելցնէ. «Փորթուգալեան այժմ հեռու է երկրէն, օտար անկիւն մը ապաստանած՝ զբաղած է իր «Արմենիա» թերթին հրատարակութեամբ: Կարելի է օգտուիլ այդ թերթին մէջ երեւցած այս կամ այն թելադրութիւններէն. բայց մենք արդէն մտած ենք գործնական աշխատանքներու

¹⁰ Երամեան Հ., նշ. աշխ., էջ 355:

¹¹ Բարսեղեան Խ., նշ. աշխ., էջ 163:

շրջանին մէջ: Մեր լաւագոյն թելադրութիւնները այժմ Երկրին մէջ գործող ուժերէն եւ անոնց գործունէութեան տուած արդիւնքներէն կուզան»¹²:

(Կ'արժէ ուշադրութիւն դարձնել երկու երեւոյթի վրայ: Նախ, Աւետիսեան «Արմէնիա»ն կը կոչէ *այդ թերթը*. ապա՝ զրոյցը լաւ ապացոյց մըն է արմենականներու իրապաշտ գործելակերպին:)

Գալով «Արմէնիա» թերթին, ճիշդ է թէ կուսակցութեան Ծրագիրը կ'ըսէր. «Կազմակերպութեանս գաղափարի տարածման թերթը ներկայիս մէջ «Արմէնիա»ն լինելով, նորա ջանքը պիտի լինի բարոյապէս եւ նիւթապէս օժանդակել այդ թերթին: «Արմէնիա»-ի խմբագրութիւնը ունէ պատասխանատւութիւն չունի կազմակերպութեանս վարչական եւ ելմտական գործերի մէջ»¹³, բայց այս տողերը արդէն իսկ ի յայտ կը բերեն կարգ մը վերապահութիւններ: Նախ՝ թերթը որոշ շրջանի մը համար (*ներկայիս*) կը նկատուի կուսակցութեան գաղափարատարածիչը. ապա՝ կը շեշտուի թէ Փորթուգալեան կուսակցութեան վարչական ու ելեւմտական գործերուն մէջ պատասխանատւութիւն չունի:

Արմենական Սահակ Զթէան, անդրադառնալով 1895-ի շրջանին, կը հաղորդէ թէ իրենց գործութեան գագաթնակէտին հասած արմենականները կը մտածէին նոր ծրագրի եւ նոր օրկանի մասին, նշելով թէ առաջին հերթին կ'առաջարկուէր «Արմէնիա»ն դարձնել կուսակցութեան օրկան, գիտնալով հանդերձ թէ Փորթուգալեան քանիցս մերժած էր կուսակցութիւնը գլխաւորելու ուղղութեամբ իրեն եղած դիմումները¹⁴:

Տրուած ըլլալով որ Արմենական Կուսակցութեան ակնարկուած Ծրագիրը կը ներկայացնէ 1894-ին վերամշակուած օրինակը, հաւանաբար կարելի է ըսել թէ այդ տողերը արդիւնքը պէտք է նկատել «Արմէնիա»ն կուսակցութեան պաշտօնական խօսափողը

¹² Դարբինեան Արտակ, «Հայ ազատագրական շարժման օրերէն», Փարիզ, 1947, էջ 43–44:

¹³ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 88:

¹⁴ Զթէան Սահակ, «Ռ. Ա. Կուսակցութեան զինանշանի յիսունեւհինգ ամեակը», «Պայքար» օրաթերթ, Պոսթոն, 15 Մարտ 1951:

դարձնելու միտումով Փորթուգալեանի հետ կատարուած բանակցութեանց:

Հոս կ'արժէ անգամ մը եւս անդրադառնալ Արտակ Դարբինեանի յուշագրութեան, ուր նշուած է թէ ինչպէս Արմենական Կուսակցութեան Կեդրոնի ներկայացուցիչներէն Օհաննէս Չափիճեան 1893-ին կ'ունենայ հետեւեալ արտայայտութիւնը.

- «Արմէնիա» թերթը ո՛չ թէ միայն մեր ուղեցոյցը չէ, այլ կապ չունի մեր կազմակերպութեան հետ:... Երբ Հնչակեան եւ Դաշնակցական անունով կազմակերպութիւններ հրապարակ եկան, ժողովուրդն ալ մեր կազմակերպութեան տուաւ «Արմենական» անունը, իսկ Փորթուգալեանի աշակերտներս ալ ի յարգանս մեր ուսուցչին պահեցինք այդ անունը եւ մինչեւ այժմ ալ կ'օգնենք «Արմէնիա»ին եւ կ'օգտուինք անկէ¹⁵:

Կը թուի թէ բանակցութեանց ընթացքին Փորթուգալեան, կտրականապէս մերժելով հանդերձ իրեն եղած առաջարկը, հաւանած է ժամանակաւորապէս տեղ տալ Արմենական Կուսակցութեան քարոզչութեան ծառայող յօդուածներու կամ նիւթերու, փոխարէնը ակնկալելով նիւթական եւ բարոյական որոշ օժանդակութիւն...:

«Արմէնիա»ն, ուրեմն, կուսակցութեան գործունէութեան ամբողջ տեւողութեան բնաւ չէ դարձած ամբողջականօրէն կազմակերպութեան հետ նոյնացած խօսափող մը:

«Արմէնիա»ն Արմենականութեան խօսափողը նկատելու տարածուն թիրիմացութիւնն է հաւանաբար հայրենի պատմաբան Ազատ Համբարեանը մղողը այն հաստատումին՝ թէ իբր արմենականները մասնակցած են 1907 Դեկտ.22-ին Փարիզի մէջ կայացած Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու *քոնկրէ*ին եւ ստորագրած անկէ բխած յայտարարութիւնը¹⁶:

Փարիզի այդ խորհրդածողովը,- որուն իբրեւ կազմակերպիչներ կը տրուին անունները Իթթիհատի եւ Հ. Յ. Դ.ի, որոնց ներկա-

¹⁵ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 33:

¹⁶ «Հայ ժողովուրդի պատմութիւն» (ակադեմական հրատարակութիւն), հատոր 2., Երեւան, 1981, էջ 514:

յացուցիչները փոխին ի փոխ նախագահած են նիստերուն,- կ'որոշէ՝ գահընկէց ընել Սուլթան Համիտը, հաստատել երեսփոխանական ժողով, ձեռնարկել կառավարութեան դէմ զինեալ դիմադրութեան ելին.:

Խորհրդաժողովին կազմակերպիչները, ջանախնդիր ըլլալով կարելի առաւելագոյն չափով քարոզչական հող ստեղծելու իրենց նպատակներուն համար, նիստերուն հրաւիրած էին նաեւ մամուլի ներկայացուցիչներ, եւ «Արմէնիա»ն, իբրեւ սուլթանական բռնակալութեան տապալումը քարոզող թերթ, այլ թերթերու կողքին, իր ներկայացուցիչով կը մասնակցի խորհրդաժողովին, սակայն ոչ թէ որպէս կազմակերպութեան մը պաշտօնաթերթը, այլ՝ իբրեւ փրոփականտի օրկան¹⁷:

«Արմէնիա»ի մասնակցութիւնն այդ *քոնկրէ*ին՝ ոչինչով կը պարտաւորեցնէր Արմենական Կուսակցութիւնը:

Ուրիշ հարց թէ արմենականները կրնային ջատագովել նման խորհրդաժողովի մը գաղափարը եւ բաժնել անկէ բխած որոշումները, եթէ նկատի ունենանք արմենականներու Ծրագրին կցուած յաւելումական լուսաբանութեան ոգին¹⁸, որ կ'ըսէր թէ դրացի ժողովուրդները, թուրքերը, քիւրտերը եւ այլ ազգեր եթէ անկեղծ գիտակցութեան հասած եւ յեղափոխուած ըլլան այն աստիճան՝ որ հայերուս առաջարկեն գործակցիլ համօսմանեան յեղափոխութեան, ատիկա կարելի է նկատել հայերը հաւասարապէս իրաւատէր ճանչնալու ապացոյց, որուն համար անշուշտ տուած պէտք է ըլլան գործնական երաշխիքներ: Նման պարագայի արեւմտահայութիւնը ուրախութեամբ կ'աջակցի ընդհանուր ազատագրական գործին:

Հոս անմիջապէս պէտք է ընդգծել թէ, ինչպէս կը տեսնուի, արմենականները նոյնիսկ եթէ կը բաժնէին խորհրդաժողովին սկզբունքը, կը մնային խիստ վերապահ եւ կը պայմանաւորէին

¹⁷ Լազեան Գաբրիէլ, «Հայաստան եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու», Գահիրէ, 1942, էջ 64–69: Նաեւ՝ Վարանդեան Միքայէլ, «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», Բ. հատոր, Գահիրէ, 1950, էջ 5–6:

¹⁸ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 172–173:

իրենց գործակցությունը կարգ մը տուեալներով: Տեղին է նշել նաեւ թէ արմենականներու եւ վերակազմեալ հնչակեաններու միաձուլումով 1908-ին կազմուած Միացեալ Հայ Յեղափոխական Կազմակերպությունը եւս սկզբունքով կ'ընդունէր օտար ցեղերու հետ համերաշխությունը, պայմանաւ որ անկախ պահուին Հայկական Դատին ինքնուրոյն գոյութիւնն ու մեր իրաւունքները եւ անոնք չստորադասուին Թուրքիոյ ամբողջութեան եւ անկախութեան պահպանման հարցին: Աւելին՝ յստակօրէն կը նշուէր թէ «Օսմանեան ընդդիմադիր տարրերու ընդհանուր քոնկրէին սկզբունքը կ'ընդունուի միայն... վերապահումներու պայմանին տակ»¹⁹: Հարկ կա՞յ ըսելու թէ Փարիզի Քոնկրէն արտայայտուած չէր ազգերու ինքնորոշման իրաւունքին մասին:

* * *

¹⁹ Նոյն, էջ 189–190:

ԾՐԱԳԻՐ, ՆՊԱՏԱԿ ԵՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Ուսումնասիրողներ, հաւանաբար հիմնականին մէջ մեկնելով Լեոյի նշումներէն, յաճախ Արմենական Կուսակցութեան իրեն ծրագրային փաստաթուղթ նկատի ունեցած են Ռ. Պատկանեանի «Վարդապետարան Հայաստանի Ազատութեան» գրքոյկը, որ լոյս տեսած է Մ. Փորթուգալեանի Մարսելի տպարանէն, 1889-ին:

Այդ «Վարդապետարան»ը չէր կրնար 1885-ին հիմնուած կուսակցութեան մը Ծրագիրն ըլլալ: Անկախաբար այն չորս տարիներու անջրպետէն, որ կը բաժնէր կուսակցութեան հիմնադրութիւնը գրքոյկին հրատարակութենէն..., կար հիմնական տարբերութիւն մը կուսակցութեան Ծրագրին եւ «Վարդապետարան»ին միջեւ: Առաջինը յստակօրէն կոչ կ'ընէր յեղափոխութեան, մինչ երկրորդը անորոշ ձեւով կը խօսէր գէնքի դիմելու մասին: Բացի այդ, արմենական յուշագրողներու մօտ չենք հանդիպիր որեւէ տողի, ուր ըսուած ըլլայ թէ Պատկանեանի գրքոյկը ծրագրային փաստաթուղթ էր կուսակցութեան համար:

«Վարդապետարան»ը եղած է պարզապէս Հայոց Հայրենասիրական Միութեան քարոզչութեան ծառայող օժանդակ փաստաթուղթ:

Արմենական Կուսակցութեան Ծրագիրը (նաեւ՝ Կանոնագիրը) Կեդրոնին եւ Մասնաժողովներուն մօտ կը պահուէր ձեռագիր վիճակով՝ թելադրուած գաղտնապահութեան մտահոգութիւններէ, եւ առաջին անգամ տպագրուած է 1947-ին: Անկէ կային միայն 7–8 օրինակներ, որոնք կ'օգտագործուէին ըստ հարկի եւ պահանջի:

Իր ճնշող մեծամասնութեամբ անուս ու անգրաճանաչ արեւմտահայութեան ազատագրութեան միտող այդ Ծրագիրը նախնա-

կան էր ու պարզունակ: Ան գուրկ էր վարդապետական-տեսաբանական խորքէ եւ ամբողջովին ծնունդն էր իր ժամանակի միջավայրին ու պայմաններուն:

Ինչպէս կը գրէ Ա. Դարբինեան, «Չէք գտներ այդտեղ տող մը, նախադասութիւն մը, որ փոխ առնուած ըլլայ տարբեր մթնոլորտներու, տարբեր ժողովուրդներու յեղափոխական կազմակերպութիւններու «աշխարհահայեացքներէն» կամ «լոգունգ»ներէն: Այդ Ծրագիրը պատրաստողները իրապէս առաջնորդուէր էին Երկրին մէջ տիրող իրական պայմաններու հարկադրանքէն...»²⁰:

Ճիշդ է թէ Ծրագիրը մշակողները չէին տիրացած համալսարանական բարձր ուսման, կամ՝ խորացած ընկերաբանական հարցերու մէջ, ինչպէս էր պարագան հնչակեան ու դաշնակցական հիմնադիրներուն եւ գործիչներուն, բայց անոնք տէր էին առնուազն երկրորդական ուսման եւ գիտակից՝ Արեւմտահայաստանի մէջ տիրող կացութեան ու այդ կացութիւնը բարեփոխելու ուղիներուն:

Ծրագիրը մշակողներուն գլխաւոր նպատակակէտը եղած էր արեւմտահայութեան յեղափոխութեամբ միայն իրագործելի ազատագրումը, որպէսզի ան ինքզինք ազատօրէն կառավարէ: Վարչակարգի հարցը կը մնար քննարկելի այդ իրաւունքին նուաճումէն ետք:

«Արմենական Կազմակերպութեանս նպատակն է, յեղափոխութեամբ Թիւրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատօրէն կառավարելու»²¹:

²⁰ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 125: Նշենք թէ 1947-ին Եկարեանի եւ Դարբինեանի յուշերուն հետ յոյս տեսած Ծրագիրն է որ նկատի կ'ունենանք այստեղ: Ծրագիրը կը կրէ 1894 թուականը, հետեւաբար կը դժուարանանք ճշդել թէ արդեօք հիմնադրութեան օրերո՞ւն ալ նոյն նպատակը ընդգծած են զայն մշակողները (Ծրագրին մէջ կուսակցութեան «Արմենական» ինքնանուանումը կը յուշէ 1887-էն ետք անոր գրի առնուած ըլլալը): Միայն ծանօթ է թէ Վանի հերոսամարտի նախօրեակին արմենականները փորձած են բարեփոխել իրենց Ծրագիրը, մանաւանդ որ բոլոր Մասնաժողովներուն հաւանութեամբ կարելի էր անոր վերաքննութիւնն ու բարեփոխումը:

²¹ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 81–82:

Ծրագիրը իր այդ նախնական վիճակին մէջ իսկ կը հակադրուէր ընկերվարական-միջազգայնական մտածելակերպին, յստակօրէն նշելով թէ կուսակցութիւնը կեանքի կոչուած է ամբողջ արեւմտահայութեան համար, առանց դաւանանքի խտրութեան, եւ թէ պատմական-քաղաքակրթական տարբերութիւններու նկատառումով՝ կը խուսափի իր ուժերը վատնելէ դրացի ազգերու մէջ ալ յեղափոխական շարժումներ յառաջ բերելու գծով, ինչ որ կրնայ դանդաղեցնել եւ կնճռոտել հայոց յեղափոխական շարժման բնականոն զարգացումը:

Հայ յեղափոխութիւնը, մանաւանդ իր նախաքայլերու շրջանին, իսկապէս որ ինքզինքին ձախողութիւն պիտի վիճակէր՝ ինքնամփոփ հզօր ուժի մը վերածուելէ առաջ նման քայլերու ձեռնարկելով: Հայելթուրք կամ հայելքիւրտ եղբայրակցութեան ու զինակցութեան հետագայ փորձերը պիտի գային ցաւալիօրէն ապացուելու իրաւացիութիւնը արմենականներու տեսակէտին:

Արմենականները իրենց նպատակին իրագործումը հնարաւոր կը համարէին միայն ընդհանուր,- ամբողջ արեւմտահայութիւնն ընդգրկող,- զինեալ շարժումով, այն ալ այնպիսի պահու մը՝ երբ Թուրքիոյ քաղաքական պայմանները (օտար պետութիւններու եւ շրջակայ ցեղերու տրամադրութիւններուն հաշուառումով) նպաստաւոր նկատուէին այդ շարժումին յաջողութեան համար:

Կը նշանակէ թէ արմենականները ամբողջովին չէին բացառեր շրջակայ ցեղերու եւ նոյնիսկ օտար պետութիւններու հետ տարուելիք աշխատանքը: Անոնց տրամադրութիւնները հայերուն ի նպաստ դարձնելու համար ծրագրուած աշխատանք էր պէտք. բայց նման ճիգ մը կանխահաս կը նկատէին տակաւին:

Ընդհանուր շարժումը պատրաստելու համար, արմենականները անհրաժեշտ կը գտնէին աշխատիլ երեք ուղղութեամբ՝ ժողովուրդին մտաւոր զարգացումը (կրթական եւ քարոզչական շարժում), անոր զինումը (զինակուտակման շարժում եւ զինավարժութիւն), մէկ տեսլականի շուրջ հաւատաւոր հայորդիներու համախմբումը:

Անոնք այլ ազգերու մէջ ուժերու ցրուումին նման վնասակար կը նկատէին բացառիկ հանգամանքներէ դուրս մասնակի եւ տկար

շարժումները (ցոյցեր, փոքր բախումներ ելն.), ինչպես նաև անժամանակ ոգեւորութիւնները, ընդունելով թէ ահաբեկչական արարքներ ներելի կրնան ըլլալ ստիպողական պարագաներու:

Նման գգուշաւորութիւնը իրապաշտօրէն թելադրանքն էր տիրող պայմաններուն: Հարկ էր պատրաստուիլ բոլորովին անադմուկ, առանց իյնալու լուսարձակին տակ թուրք իշխանութիւններուն. մինչդեռ մասնակի շարժումները պիտի ծառային թուրք ոստիկանութեան հետապնդումը յեղափոխական աշխատանքներուն վրայ հրաւիրելու եւ անհարկիօրէն զանոնք դժուարացնելու:

Անիրատեսութի՛ւն: Ընդհակառակը: Ծրագիրը մշակողները գիտակից էին թէ կրնային պատահիլ չնախատեսուած բախումներ, մանաւանդ զինատարական աշխատանքներու ժամանակ: Բայց ծրագրային նման շրջահայեաց կէտի մը ընդգծումը պիտի սանձէր անդամներուն ոգեւորութիւնն ու արէր անոնց գգուշաւորութիւնը առաւելագոյն չափով՝ նուագագոյնի իջեցնելու կառավարական միջամտութիւններն ու այլ կարգի անպատեհութիւններ:

Հոս պէտք է նշել թէ Արմենական Կուսակցութեան Ծրագրին անդրադարձողները հակասութիւն մը գտած են անոր եւ կուսակցութեան գործունէութեան միջեւ, մատնանշելով ահաբեկչական-ցուցական արարքներ՝ արմենականներու կողմէ գործուած: Մենք աւելի հակուած ենք կարծելու թէ ատոնք առաւելաբար կրնային ըլլալ անհատներու կամ խումբի մը նախաձեռնութիւնը, առանց վայելելու հովանաւորութիւնը կամ համամտութիւնը կուսակցութեան կեդրոնական իշխանութեան: Այս առթիւ կ'արժէ ընդգծել հետեւեալը. – թէ՛ Համբարձում Երամեանի կողմէ իբրեւ միամիտ երեւոյթ նշուած Վանի պահականոցներն ու բերդը գրաւելու ծրագիրը, թէ՛ Նուրիի եւ Ճոչաղայի ահաբեկումները եւ թէ Ծաքիի սպանութեան փորձը կը կապուին անուան հետ Փանոս Թերլեմեզեանի...: (Հետաքրքրական է թէ, ըստ Ռուբէնի յուշերուն, Թերլեմեզեան Նուրիի ահաբեկումը գործած է դաշնակցական գործիչ Պետոյի խորհուրդով...:)

Շարք մը հեղինակներ, անդրադառնալով արմենականներու թէեւ նախնական բայց ըստ էութեան տուեալ պահուն ու միջավայրին բաւարար եւ դրապաշտ Ծրագրին, առանց հաշուի առնելու

տիրող պայմանները, թերթերին, երբեմն ալ արհամարհանքով, արձակած են աժան վճիռներ.– թե՛ արմենականները առանց դեկավար սկզբունքներու ապրող հոսանք են²², թե՛ Արմենականությունը պարզապես մարդոց խայտաբղետ խմբակցություն էր՝ տիրացուական ազատասիրութեան եւ պուրժուա-առետրական ազգայնամոլութեան սահմաններէն դուրս ոչինչ ճանչցող²³, թե՛ անոնք մշակուած ծրագիր ու գործունէություն չունէին²⁴, թե՛ «Կուսակցութեան մը որակումն իսկ դժուար է տալ արմենականութեան, որ ընդհանուր շփոթ մտայնութեան մը արտացոլացումն է կազմակերպութեան մը ձեւին տակ»²⁵:

Ոմանք նոյնիսկ արմենականները որակած են իբրեւ պահպանողականներ, հաւանաբար նկատի ունենալով անոնց ծայրայեղ զգուշաւորությունը, մինչդեռ պահպանողականությունը բոլորովին անյարիր է Արմենականութեան նման *յեղափոխություն* դաւանող կուսակցութեան մը:

Հետաքրքրական է որ արմենականներու մշակուած ծրագրի չգոյությունը «հաստատող» Արամ Մանուկեանը անմիջապէս կ'աւելցնէ. «Բայց պէտք է խոստովանիլ, որ մտաւորականությունը նրանց կողմն էր. ուսուցչությունը, մանաւանդ պատրաստուած ու դեկավար տարրը նրանցից էին»²⁶, ուրիշ տեղ մը ըսելու՝ «Ամենագարմանալին այն էր, որ Գեորգեան Ճեմարանի վանեցի աշա-

²² «Արամը», Պէյրութ, 1969, էջ 225:

²³ Ղարաջեանի այս կարծիքը Խիկար Բարսեղեան մէջբերած է իր մեզի ծանօթ աշխատութեան մէջ, ուրկէ օգտուած է նաեւ Հրանդ Գանգրունին իր «Հայ յեղափոխությունը օսմանեան բռնատիրութեան դէմ» (Պէյրութ, 1973) գիրքին մէջ, ուր արմենականներու մասին տեղ գրաւած բաժինը կը վիստայ սխալներով եւ անճիշդ դատումներով, միաժամանակ յայտարարը դառնալով անպարկեշտ ու հակագիտական մօտեցումի:

²⁴ «Արամը», էջ 227:

²⁵ Չորմիսեան Լեւոն, «Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան», Բ. հատոր, Պէյրութ, 1974, էջ 194:

²⁶ «Արամը», էջ 227:

կերտների մեծամասնությունը արմենական էր»²⁷:

Հարց է թե ուսեալ, զարգացած, գիտակից երիտասարդներ թե հասուն մարդիկ կրնային քակել մշակուած ծրագրէ եւ գործունէութենէ զուրկ կուսակցութեան մը ետեւէն...:

Իրենց գործունէութեան ընթացքին, արմենականները առաջնահերթ կը նկատէին ժողովուրդին գիտակցական մակարդակին բարձրացումը: Այլ խօսքով՝ կրթական-քարոզական շարժումը: Անհրաժեշտ էր նախ զինել միտքը եւ ապա՝ բազուկը: «Արմենականները շատ երկար եւ, պէտք է ասել, համոզիչ կերպով պատճառաբանում էին, որ դեռ ժողովուրդը պատրաստ չէ յեղափոխական գաղափարների համար եւ որ նախ պէտք է ժողովուրդը պատրաստել դպրոցով, խաղաղ միջոցներով եւ ապա միայն մտածել յեղափոխութեան մասին»²⁸:

Այս մօտեցումը եղած է այն հիմնական պատճառներէն մէկը, որ արմենական ղեկավար եւ առաջնորդող տարրին ուշադրութիւնը առաւելաբար կեդրոնացած պահած է քաղաքաբնակ հայոց վրայ, զիւղացիներուն քիչ բաժին հանելով այդ ուշադրութենէն:

Կրթական շարժման առընթեր, սակայն, արմենականները միշտ հետամուտ եղած են ժողովուրդը զինելուն, որպէսզի ան պատրաստ գտնուէր ինքնապաշտպանութեան, ապա նաեւ՝ յեղափոխական ընդհանուր շարժումին:

«Մարդկային իրաւունքներու համար մղուող այդ պայքարի ղեկավարն ու առաջնորդն էր Արմենական Կուսակցութիւնը, որ թէեւ կը զգար գոյութիւն ունեցող կարգերը ամէն գնով յեղափոխելու անհրաժեշտութիւնը, բայց միաժամանակ կը գիտակցէր նաեւ այս շարժման ծանր հետեւանքներուն: Այդ պատճառով ալ ան կը տատանէր երկու տեսակէտներու միջեւ՝ ժողովուրդի իրաւունքները ձեռք բերել անոր մշակութային մակարդակի բարձրացումով, թէ ուժի միջոցով: Արմենականութիւնը այսպէտով իր մէջ կ'ամփոփէր միաժամանակ եւ յեղափոխականը եւ կուլտուրական գործիչը: Ան կը հաւատար, թէ՛ աստիճանական խաղաղ զարգա-

²⁷ Նոյն, էջ 228:

²⁸ Նոյն, էջ 229:

ցումին եւ թէ՛ յեղափոխական գործելակերպին՝ զենքին, եւ այդ պատճառով ալ ան երկրի մէջ ունէր թէ՛ կուլտուրական կազմակերպութիւններու ցանց մը եւ թէ՛ միաժամանակ մարտական զինական խումբեր²⁹:

Արմենականներու Ծրագիրը ժամանակի ընթացքին պայմաններու փոփոխութեան հետ անցած է բովէն բարեփոխումներու, որոնց թեւ ալսօր ծանօթ չենք, բայց ի վիճակի ենք ըսելու թէ եղած են մասնակի ու թերեւ, հիմնականին մէջ նոյնը պահելով 1894-ի Ծրագրին գլխաւոր կէտերը:

Ըստ երեւոյթին Ծրագիրը վերջին անգամ թերեւ բարեփոխման ենթարկուած է Սեպուհի գործունէութեան օրերուն, 1906–1907-ի շրջանին: Այդ առթիւ Ծրագրին կցուած է յաւելուածական լուսաբանութիւն մը³⁰, յստակացնելու համար մանաւանդ կուսակցութեան դիրքորոշումը հանդէպ ընկերվարութեան, որ 1905-ի ռուսական յեղափոխութենէն ետք նոր թափով հետաքրքրութիւնը սկսած էր շարժել արեւմտահայութեան:

Հոն մատնանշուած է թէ «գաղափարական շէնքն իսկական հողի վրայ պէտք է կառուցանել եւ ոչ թէ օդի մէջ», թէ՛ հայկական իրաւունքներու տիրացման համար անհրաժեշտ է նախ սեփական ուժ եւ ապա արտաքին պաշտպանութիւն, առանց միամիտ հաւատքի եւրոպական դիւանագիտութեան վայ³¹, թէ՛ ընկերվա-

²⁹ Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր Բ., Պէյրութ, 1983, էջ 93:

³⁰ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 170–173:

³¹ 1895–96-ի կոտորածներէն ետք Արմենականութիւնը խիստ վերապահ էր օտար պետութիւններու նկատմամբ, որոշ չափով բացառութիւն նկատելով Ռուսաստանը: Մասնաժողովի ատենապետ Ղեւոնդ Խանջեան (հայրը՝ Աղասի Խանջեանի) առիթով մը կ'ըսէր. «Հայկական ջարդերը հաստատեցին թէ եւրոպական պետութիւններու հակամարտութիւնները չեն թոյլատրեր որ մենք անոնց աջակցութեան վրայ յոյս դնելով արկածախնդրութիւններ ընենք: Ինչ ալ ըլլայ այսօր Ռուսիոյ քաղաքականութիւնը Կովկասի հայութեան հանդէպ, եթէ մենք յոյս մը պէտք է ունենանք օտար պետութեան մը վրայ, այդ յոյսը մեզի դրացի Ռուսիոյ վրայ դնելու ենք (Դարբինեան

րական յեղափոխությունը անյարիր է ներկայի հայ իրականությանն եւ բաղձալի ու գործադրելի՝ երբ քաղաքական կարգերու եւ տնտեսական պայմաններու շնորհիւ յառաջանայ հայկական նոր հասարակութիւն. այսինքն՝ սկսի աշխատանքի եւ դրամագլուխի պայքարը, բայց ատիկա ըլլալով ապագայի հարց՝ ներկայ հանգրուանին հրամայական պահանջն է ամէն բանէ առաջ բոլոր միջոցներով փարիլ ինքնապաշտպանութեան գաղափարին եւ հայերու մարդկային իրաւունքներու դատին, որպէսզի տանելի վիճակ մը ձեռք բերելէ ետք՝ հայը կարենայ ձեռք մեկնել նաեւ օսմանեան ժողովուրդներու ապագայ յեղափոխութեան:

Մինչեւ հիմա ըսուածները կը վերաբերին կուսակցութեան պաշտօնական ըմբռնումներուն եւ գործելակերպին, որոնք ընդունուած էին եւ հետեւողականօրէն կը կիրարկուէին անդամներու մեծամասնութեան կողմէ: Բայց կային անդամներ ալ որ տարբեր կերպ կը մտածէին. ատոնք ընդհանրապէս կը կազմէին *աքմատական* (պայամանականօրէն) թելը կուսակցութեան եւ ատոնք են որ հետագային հակամիտութիւն ցոյց պիտի տային Դաշնակցութեան միանալու:

* * *

Ա., նշ. աշխ., էջ 110): Արմենականները գործնապէս ալ զգացած էին օտար շահերու հակադրութիւնը հայկական շահերուն: Անուշաւան Տէր Մկրտիչեան իր յուշերուն մէջ («Պայքար» օրաթերթ, 24 Յուլիս 1959) կը յիշատակէ արմենականներու կողմէ ասորիներու հետ գործակցութեան փորձ մը, որ ձախողած էր անգլիական միջամտութեան հետեւանքով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ

Կուսակցությունը բաղկացնող անդամները կը բաժնուէին երկու կարգի՝ գործող եւ քաջալերող: Գործող կը նկատուէին անոնք՝ որ կ'ենթարկուէին կանոնագրին, կը գործադրէին իրենց տրուած հրահանգները եւ պարբերաբար կը վճարէին անդամատուրքը: Այլ խօսքով՝ ամբողջական յանձնառութիւն ունէին կուսակցութեան Ծրագիր-Կանոնագրին նկատմամբ: Ասոնք կ'ընտրուէին զգուշաւորութեամբ, երաշխաւորութիւններով եւ անպայման հպատակելու խոստումով: Քաջալերող անդամները ունէին սոսկ համակիր-օժանդակներու հանգամանք: Անոնք համակրելով կուսակցութեան Ծրագրին՝ ինքնաբոլիս կերպով նիւթալէս եւ բարոյալէս կ'օժանդակէին կազմակերպութեան, առանց որեւէ պարտաւորութեան կամ յանձնառութեան՝ Ծրագիր-Կանոնագրին հանդէպ:

Իւրաքանչիւր 5–15 գործող անդամներու համախմբումով կը կազմուէր Խումբը: Որեւէ Խումբ, չհաշուած արտակարգ նիստերը՝ ըստ հարկի եւ պահանջի, պարտաւոր էր 15 օրը անգամ մը ժողով գումարել: Այդ ժողովներու ընթացքին օրուան խնդիրներուն շուրջ անդամները կը կատարէին խորհրդակցութիւններ, կը ծանօթանային Մասնաժողովին հրահանգներուն եւ կ'ունկնդրէին ընթերցումներ, որոնք կը կատարուէին յեղափոխական գիտակցութիւնը զարգացնելու միտումով:

Ժողովները կը վարէր գաղտնի քուէներու մեծամասնութեամբ երկու տարուան տեւողութեամբ ընտրուած խմբապետը, որ իր կողքին կ'ունենար նոյն ձեւով ընտրուած զանձապահ ու մթերապահ: Երկու տարին ամբողջացնելէ ետք վերընտրելի եղող այս պատասխանատու անդամները կրնային գաղտնի քուէի մեծամաս-

նութեամբ հրաժարեցուիլ ալ՝ եթէ գեղծումներ գործուէին:

Խումբին դիւանէն քարտուղարի կամ աստենադպիրի բացակայութիւնը կրնայ ըլլալ հետեւանքը մէկ կողմէ՝ գաղտնապահական գգուշաւորութեան, իսկ միւս կողմէ՝ գրաճանաչներու թիւի սակաւութեան:

Խմբապետը, գանձապահն ու մթերապահը (վերջին երկուքը պատասխանատու կ'ըլլային գանձին եւ գոյքերուն, որոնք հիմնականին մէջ կ'ըլլային զէնքեր եւ փամփուշտներ) իրաւասու էին գործելու միայն եւ միայն խումբին հաւաքական որոշումով: Վերջին երկուքը վեց ամիսը անգամ մը պարտաւոր էին հաշուետւութիւն կատարել ժողովին:

Խումբի մը կազմաւորման պարագային՝ գոյքն ու դրամը կը մնային Մասնաժողովին: Այդ գոյքին եւ դրամին մէկ մասին կամ ամբողջութեան տէր կանգնելու իրաւունքէն ընդմիշտ կը զրկուէին անոնք որ կը հրաժարէին, կը հրաժարեցուէին, կ'արտաքսուէին կամ Խումբը կ'ուզէին ձուլել այլ կուսակցութեան մէջ՝ նոյնիսկ եթէ մեծամասնութիւն կազմէին անոնք:

Գոյքի եւ դրամի նկատմամբ այսպիսի տրամադրութիւններ պարփակող յօդուածի մը ներկայութիւնը Կանոնագրին մէջ, կը յուշէ թէ արմենական մէկէ աւելի Խումբեր բաժնուած են Արմենականութենէ եւ միացած են այլ կուսակցութեան: Այս մասին կան փաստեր, որոնց կը ծանօթանանք տակաւին:

Կանոնագիրէն կը պարզուի թէ Խումբը օժտուած չէր իրաւասութիւններու լայն սահմաններով եւ մեծապէս կախեալ էր Մասնաժողովէն ու անոր հրահանգներէն, «որպէսզի սխալներէ որչափ կարելի է զերծ մնան եւ իրենց ըրածը աւելի օգտաւէտ ըլլայ»: Մասնաժողովին կողմէ նման խիստ հակակշիռի մը ներկայութիւնը կրնայ բացատրուիլ անդամներու գիտելիքներուն խոնարհութեամբ:

Յեղափոխական գործը աւելի կեդրոնացեալ ձեւով յառաջ տանելու եւ զանազան Խումբերու միջեւ համերաշխ գործակցութիւն գոյացնելու նպատակով, 5–12 Խումբեր կրնային միանալ իրարու եւ կազմել Համայնք մը: Համայնքին գործերու ղեկավարումը կը վստահուէր միացող Խումբերու խմբապետներէն բաղկացած

Խմբապետական Ժողովին, որ ամռնուազն երեք շաբաթը անգամ մը կը գումարէր հերթական նիստ:

Խմբապետական Ժողովները իրենց կողմէ երկու տարուան համար մէկական ներկայացուցիչ ընտրելով, կը կազմէին Մասնաժողովը, որ իրեն համար ընտրուած անդամ մը անյարմար նկատելու պարագային՝ տուեալ Խմբապետական Ժողովին կը հրահանգէր նոր մը ընտրել: Ան իրաւասու էր նաեւ իր յարմար դատած անձը ներկայացնելու իբրեւ ընտրելի՝ եթէ այս կամ այն Խմբապետական Ժողովին մէջ չգտնուէր Մասնաժողովին անդամակցելու ձեռնհասութիւնն ունեցող անդամ:

Մասնաժողովը կ'ունենար իր նիստերը վարող եւ որոշումներուն գործադրութեան հսկող ատենապետ, որոշումներն ու հրահանգները խմբագրող եւ թղթակցութիւնները պահող քարտուղար, գանձապահ, մթերապահ, Խումբերու գոյքերուն ու տոմարներուն վիճակագրական ցուցակները պահող եւ ստուգումներ կատարող ընդհանուր քննիչ, հրատարակութիւններու եւ յանձնարարութիւններու բաշխման հետեւող յարաբերութիւններու տեսուչ: Այս վերջին չորսն ալ վեցամսեայ դրութեամբ հաշուետուութիւն կատարելու հարկադրանքին տակ կը գտնուէին:

Մասնաժողովը իր նիստերը կը գումարէր հերթաբար, երեք շաբաթը անգամ մը:

Նիստերու որոշումներուն մասին Խմբապետական Ժողովներուն կարելի էր զեկուցում կատարել միայն ժողովին արտօնութեամբ:

Մասնաժողովի նիստերուն արտօնուած էին մասնակցիլ Ծրագիրը ընդունող համակիր ձեռնհաս անձեր ալ, պայմանաւ որ անոնց թիւը չանցնէր Մասնաժողովի անդամներուն թիւին կէսը:

Տագնապալի օրերուն կուսակցական գործունէութիւնը անխափան կարենալ յառաջ տանելու կանխահոգութեամբ՝ Մասնաժողովը իր մէջէն կրնար ընտրել 3–5 հոգինոց յանձնախումբ մը, որուն լիազօրութիւնները սակայն կը սահմանափակուէին գործադիր իշխանութեան իրաւասութիւններով: Ան իրաւունք չունէր օրէնսդրական փոփոխութիւններ կատարելու:

Մասնաժողովը կը վարէր տեղական յեղափոխական գործերը

մէկ կամ անէկ Համայնքներէ կազմուած Ծրջանակներուն ու յարաբերութիւն կը պահէր զանազան Մասնաժողովներու եւ Կեդրոնին հետ:

Մեզի ցարդ ծանօթ է գոյութիւնը հինգ Ծրջանակներու, որոնցմէ առաջինը՝ Վասպուրականինը (Ա. Ծրջանակ), բաղկացած էր չորս Համայնքներէ՝ Յանկոյս, Նորաշէն, Արարք, Բաղաքամէջ:

Ծրջանակներու թիւը կ'որոշուէր Կեդրոնին կողմէ, որ կուսակցութեան գերագոյն մարմինն էր եւ կազմուած կ'ըլլար իւրաքանչիւր Ծրջանակի Մասնաժողովի ներկայացուցիչներէն: Ան կը վարէր յեղափոխական գործի վերին տեսչութիւնը, յարաբերութիւն կը մշակէր Մասնաժողովներու եւ այլ յեղափոխական մարմիններու հետ, կ'որոշէր ընդհանուր շարժումներու եղանակն ու ժամանակը: Անոր հսկողութեամբ պիտի լոյս տեսնէր կուսակցութեան օրկանը՝ եթէ օր մը արմենականները կարենային յաջողեցնել իրենց ծրագիրը եւ ունենային իրենց պաշտօնաթերթը:

Մասնաժողովները առանց Կեդրոնի թոյլտուութեան արտօնուած չէին յարաբերութիւն մշակելու այլ յեղափոխական մարմիններու հետ:

Կուսակցութեան անդամներուն եւ զանազան մարմիններուն յարաբերութիւնները տեղի կ'ունենային Ծրջանակի պայմաններուն պատշաճող ներքին կանոնադրութիւններու հիման վրայ, որոնք չէին կրնար հակասել Ծրագրին եւ հիմնական Կանոնագրին:

Այս գործադիր մարմիններէն անջատաբար կը գործէր Զինուորական Ատեանը կամ Մարմինը³²,– թերեւս Համայնքներու թիւին համեմատ նկատի առնուած ներկայացուցիչներով,– որուն խորհրդակցութիւններուն կը մասնակցէին Կեդրոնէն երկու ներկայացուցիչներ:

Զինուորական Մարմինը իր տրամադրութեան տակ կ'ունենար մի քանի տասնեակ զինուորներէ բաղկացած խումբեր, որոնք միշտ պատրաստ կ'ըլլային գործադրելու իր հրահանգները:

Զին. Մարմինը կը հետեւէր զինավարժութիւններուն եւ զինատարութեան առաւելաբար: Հաւանաբար իր խողովակով կը կա-

³² Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 72:

տարուէին նաեւ զինական գործողութիւններն ու ահաբեկումները:

Նկատելի է թէ Արմենական Կուսակցութեան հիմնական Կանոնագիրը խարսխուած էր վարչական խիստ կեդրոնացեալ դրութեան մը վրայ եւ հակառակ անոր որ մարմիններու կազմութեան մէջ տիրապետող էր ընտրութեան (այն ալ գաղտնի քուէարկութեամբ) եւ ոչ թէ նշանակումի եղանակը, իսկ որոշումներն ալ ըստ պարագայի կը տրուէին մեծամասնութեան կամ բացարձակ մեծամասնութեան քուէով, ռամկավարական հետեւողական կիրարկումէն հեռու էր ան: Անշուշտ հոս դեր ունէին երկրին պայմանները, շարքայիներու գիտակցական մակարդակն ու կուսակցութեան յեղափոխական բնոյթը:

Ներքին կանոնագրերուն գլխաւոր առաւելութիւնը պէտք է նկատել անոնց ճկունութիւնն ու պատշաճեցումը տեղական պայմաններուն կամ շարքայիներու վիճակին: Օրինակ՝ անդամատուրքերը կը սահմանուէին ըստ անդամներու զարգացման աստիճանին եւ նիւթական կարողութեան:

Կուսակցութեան մէջ կանոնագրերուն դիմելու հարկը քիչ անգամ կը զգացուէր, որովհետեւ փոխադարձ վստահութեան ոգին եւ զոհողութեան պատրաստակամութիւնը զօրաւոր էին գաղափարակիցներուն մէջ³³:

Արմենականներու կանոնագրէն կը բացակային անդամակցութեան պայմանները ճշդող կէտեր: Ասկէ կարելի է հետեւեցնել թէ կուսակցութեան,– միշտ խիստ քննութենէ եւ երաշխաւորութիւններէ ետք,– կրնային անդամակցիլ բոլոր անոնք (հաւանաբար առանց սեռի խտրութեան, բայց որոշապէս տարիքային սահմանափակումով), որոնք կ'ընդունէին կուսակցութեան Ծրագիրը եւ կը խոստանային գործադրել զայն ու ենթարկուիլ իրենց տրուելիք հրահանգներուն:

Անդամներուն մէջ կային արհեստաւորներ, մշակներ, բժիշկներ, առեւտրականներ, ուսուցիչներ, գործիչ-քարոզիչներ, առաջնորդ-ուղեցոյցներ (վալատ), հոգեւորականներ, իրաւաբաններ, կառավարական ստորադաս պաշտօնեաներ (ոստիկան, պահակ եւլն.),

³³ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 124:

զինագործներ եւ հայդուկներ կամ մարտիկներ:

Ասոնց մէջ նկատառելի թիւ մը կը կազմէին մտաւոր որոշ զարգացումի տիրացած երիտասարդները, ուսուցիչներն ու առեւտրականները (կային մեծ թիւով ոսկերիչներ ալ): Այս պարագան ալ պատճառ դարձած է որ Արմենական Կուսակցութիւնը գնահատուի իբրեւ պուրժուական կազմակերպութիւն...:

Բնականաբար այս անդամներէն միայն գործիչ-քարոզիչները, որոնք մեծ մասամբ նաեւ ուսուցիչ էին, – եւ մարտիկները տեւապէս կը տանէին կուսակցական գործունէութիւն: Միւս անդամները կը բաւարարուէին ներկայ ըլլալով պարբերական, հերթական ժողովներու կամ խորհրդակցութիւններու, ինչպէս նաեւ գործադրելով իրենց վստահուած պարտականութիւնները:

* * *

ՆԻԺԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Կուսակցության նիւթական եկամուտները կը գոյանային հիմնականին մէջ անդամատուրքերէն, քաջալերող անդամներու նիւթական օժանդակութիւններէն եւ Խումբերու կողմէ «վայել միջոցներով» ձեռք բերուած հասոյթէն:

Արեւմտահայաստանի մէջ գործող գործօն թէ օժանդակ անդամներու տուրքերէն եւ նուիրատուութիւններէն գոյացած հասոյթին 30 առ 100ը վեց ամիսը անգամ մը Խումբը կը փոխանցէր Մասնաժողովին, որ իր հերթին այդ գումարին կէսը կը փոխանցէր Կեդրոնին:

Արտասահմանի Շրջանակները Կեդրոնին կը յատկացնէին իրենց հասոյթին 40 առ հարիւրը:

Խումբերը իրենց գոյացուցած հասոյթին մնացեալ 70 տոկոսը կը յատկացնէին յարաբերութիւններու, նոր Խումբերու կազմութեան, գաղափարատարածիչ թերթին եւ քարոզչութեան, ճամբորդութիւններու, գործիչներու կեցութեան, ինքնապաշտպանութեան միջոցներու գնման, զինավարժութիւններու, ինքնակրթութեան նպաստող շրջուն գրադարաններու կազմութեան, զինագործարաններու հաստատման, պետական պաշտօնատարներու կաշառքին եւլն.:

Ինչպէս Կանոնագիրը, այնպէս ալ իրողութիւնները ցոյց կու տան, թէ կուսակցութեան նիւթական միջոցները՝ հակառակ անդամներէն շատերու նիւթական բարւոք վիճակին՝ սահմանափակ էին եւ արգելք՝ աւելի տարածուն աշխատանքի: Մինչդեռ աւելի լայնահուն գործունէութեան համար այդ օրերուն թերեւս հարկ էր դիմել միւս կուսակցութիւններու օրինակին:

ԱՐՄԵՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Թե՛ ռամկավար յուշագրողներու մօտ եւ թե՛ այլ աղբիւրներու մէջ ընդհանրացած է այն տեսակէտը՝ թէ Արմենական Կուսակցութիւնը սահմանափակուած մնաց առաւելաբար Վասպուրականի, յատկապէս Վանի մէջ:

Ընդհանուր առմամբ ճշմարտանման ըլլալով հանդերձ այս տեսակէտը, կ'արժէ հպանցիկ ակնարկ մը նետել Արմենականութեան տարածումին վրայ, որքանով որ թոյլ կու տան ժլատ աղբիւրները:

Տեսանք թէ արմենականներու 1894-ի Ծրագիրը կուսակցութեան իբրեւ նպատակ կը սահմանէր՝ յեղափոխութեամբ *Թուրքիոյ հայ ժողովրդեան* համար ինքզինք ազատօրէն կառավարելու իրաւունքին ձեռք բերումը, հաւատալով *ընդհանուր ապստամբութեան* բարիքին:

Միայն Վասպուրականի մէջ աշխատանք տանելով կարելի պիտի չըլլար, անշուշտ, իրենց նպատակին իրագործումը: Ուրեմն հարկ էր տարածուիլ:

Նկատի ունենալով արմենականներու այն հաւատամքը՝ թէ իրենց կուսակցութիւնը կեանքի կոչուած է միայն արեւմտահայութեան շահերուն պաշտպանութեան համար, եւ թէ յեղափոխական գործը պէտք է կեդրոնանար հայկական Նահանգներուն մէջ, նոյնպէս՝ հաշուի առնելով գաղափարական հասունութեամբ օժտուած տարրերով յեղափոխական գործը լուռ եւ դանդաղօրէն յառաջ տանելու արմենական ուղեգիծը, հասկնալի կը դառնայ թէ ինչու կուսակցութիւնը տարածուելու փութկոտութիւնը չէ ունեցած. իսկ տարածուելէ յետոյ ալ՝ Երկրէն դուրս գործող խումբերն ու մասնաճիւղերը ընդունած է սոսկ ընդհանուր գործին օժան-

դակոդի դերով:

Արմենականներու ծաւալման քարտեւը մեզ Արեւմտահայաստանի գաւառներէն կը տանի մինչեւ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Անոնք առաջին հերթին կը փորձեն թափանցել գաւառային այլ շրջաններ ու Պարսկահայք՝ միշտ նկատի ունենալով մէկ կողմէ կրթարաններու հաստատումն ու ժողովուրդին ինքնագիտակցութեան զարգացումը, իսկ միւս կողմէ՝ զինակուտակման աշխատանքը:

Շուտով Շատախի մէջ Փորթուգալեանի աշակերտներէն Շահէն Կուժիկեանի նախաձեռնութեամբ կը կազմուի մասնաճիւղ մը:

Եղիշէ Քոնտաքճեան կը դառնայ հիմնադիրը Բաղէշի մասնաճիւղին:

Հայրապետ Ճանիկեան աշխատանք կը տանի Մշոյ մէջ հաստատելու արմենական մասնաճիւղ մը:

Սալմաստի շրջանէն մանաւանդ Հաւթվանը կ'օժտուի հզօր մասնաճիւղով մը:

Վիպասան Արմէն Շիտանեան Փլովտիւի մէջ (Պուլկարիա) կը հիմնէ օժանդակ մասնաճիւղ մը: Կը յիշուի թէ Պուլկարիոյ մասնաճիւղը գլխաւորող Թիւթիւնճեանը հայերուն կոչ կ'ուղղէր հետեւելու պուլկարներու օրինակին:

Պոլսոյ, Տրապիզոնի, Թիֆլիսի, Պաքուի, Ռոստովի, Սելանիկի մէջ թէ այլուր կը գործեն արմենական խումբեր:

Մինչեւ իսկ Միացեալ Նահանգները կ'ունենայ իր օժանդակ մասնաճիւղը: Հոն հաստատուած արմենականներ Յովհաննէս Յակոբեան, Յ. Ռուսեան, Գ. Մանուկեան, Ա. Չիթչեան եւ ուրիշներ մասնաճիւղը զօրացնելու նպատակով պահ մը նոյնիսկ Փորթուգալեանը կը հրաւիրեն Ամերիկա, բայց իրենց հրաւերը կ'անտեսուի³⁴:

³⁴ Գազանճեան Լ., նշ. աշխ., էջ 290: Երուանդ Տէր Մկրտիչեան արմենական զանազան մասնաճիւղերու եւ խումբերու թուարկումը կատարելու պահուն Բաղէշի մասնաճիւղին կազմութեան պատիւը տուած է Յովհաննէս Գուլօղլեանի: Ան յարակցաբար յիշատակած է

Տուեալները ցոյց կու տան թէ արմենական խումբերն ու օժանդակ մասնաճիւղերը կը բաղկանային բացառապէս արեւմտահայերէ եւ յատկապէս վասպուրականցիներէ:

Թէ յիշեալ խումբերը եւ մասնաճիւղերը ո՞րքանով հզօր ու ազդեցիկ էին եւ քանի՜ տարուան կեանք ունեցան, ստուգապէս կարելի չէ ճշդել մեր ունեցած աղբիւրներով: Յստակ է, սակայն, որ Արմենականութեան տարածման եւ արմատաւորման դէմ ազդակներ դարձան մէկ կողմէ հնչակեաններն ու դաշնակցականները³⁵, իսկ միւս կողմէ՝ 1896-ի հերոսական ինքնապաշտպանութիւնը, մանաւանդ երբ նկատի ունենանք որ Վանն էր գլխաւոր կեդրոնը կուսակցութեան:

* * *

բարեսիրական նպատակներով գործող *Ամոքիչներ* եւ *Բարիներ* կոչուած խումբերը, որոնք օգնութեան ձեռք կը մեկնէին կարօտեալ հայրենակիցներու, իրենց քաղաքական բնոյթի կուսակցական պարտականութիւնները կատարելու կողքին («Գանձեր...», էջ 639–640):

- ³⁵ Այս կուսակցութիւնները կրցան զգացականօրէն արմենականներէն աւելի խանդավառել զաւառի խոնարի գիտելիքներու տէր զանգուածները մանաւանդ: Առաւելութիւն մըն էր նաեւ այն՝ որ անոնք ունէին կարելոր թիւով ամբողջովին յեղափոխական գործին նուիրուած գործիչներ: Օրինակ մը տուած ըլլալու համար, նշենք թէ Շատախի մէջ, որուն ինքնապաշտպանութեան կարելոր դեկավարներէն մին էր արմենական Մահտեսի Գուրոյեան Թովմասը, հայութիւնը նախ առաջնորդուած է Արմենականութեան գաղափարներով ու գործելակերպով, բայց յետոյ շատեր զանազան պատճառներով հեռանալով Արմենական Կուսակցութենէն՝ մտած են յատկապէս Հ. Յ. Դ.ի շարքերը: Ա. Դարբինեան իր նախապէս ակնարկուած յուշագրութեան մէջ (էջ 147) կ'ըսէ. «Հ. Յ. Դաշնակցութիւնը թրքահայ ազատագրական շարժման մէջ եղաւ այն ուժը, որ խեղդեց Երկրին ձայնը, խոցոտեց արմենականութեան թելերը եւ տիրականօրէն իշխեց ամենուրեք...»:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՅՈՒՆ (երկու դրուագ)

Ա.) Արեան մկրտություն.—

Հակառակ անոր որ արմենականները խիստ ուշադիր էին իրենց գործունեությունը մեծ զգուշաւորութեամբ եւ գաղտնօրէն, առանց բախումներու յառաջ տանելու առումով, անխուսափելիօրէն պատահական ընդհարումներ տեղի պիտի ունենային զանազան առաքելություններով Վանէն Պարսկահայք եւ հակառակ ուղղութեամբ երթեւեկող խումբերու եւ թուրք ոստիկաններու կամ քիւրտ զինեալներու միջեւ:

Այդպիսի ընդհարում մը, 1889-ի Մայիսին³⁶, դարձաւ արեան մկրտություն մը Արմենական Կուսակցութեան համար: Հերոսներն էին՝ Վարդան (Ալեքսանդր) Գոլոշեանը, Յովհաննէս Ագրիպպասեանը (Դաբաղեան) եւ Կարապետ Կուլաքսըզեանը (Ականջատեան)³⁷:

Ասոնցմէ առաջինը ծնած էր Թիֆլիս, տարի մը ուսանած էր Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ, ուրկէ դուրս դրուած էր իր ըմբոստ նկարագրին համար, եւ 1883-ին որոշած էր անցնիլ Արեւ-

³⁶ Կարգ մը աղբիւրներ սխալմամբ ընդհարման իբրեւ թուական նշած են 1887-ն ու 1888-ը:

³⁷ Յիշեալներուն մասին տեղեկությունները քաղուած են Ջոն Կիրակոսեանի նշուած աշխատութենէն (էջ 210-217), «Վասպուրական» գիրքէն (Վենետիկ, 1930), 1905-ին Ժընեւ հրատարակուած Ս. Նիրվանեանի «Յեղափոխականներ» գրքոյկէն եւ 1967-ին Քալիֆորնիա լոյս տեսած Լուիզ Նալպանտեանի «Տիի արմինիլը յիվոյիւշընըրի մուվմընթ» աշխատասիրութեան արմենականներուն նուիրուած բաժինէն:

մտահայաստան ու ժամանակաւորապէս հաստատուած էր Պարսկահայք: Ան ուներ գրական փորձեր (հայրենասիրական շունչով) եւ թղթակցած էր «Արմէնիա»ին: 1887-ին դարձեալ դառնալով Թիֆլիս, հոն կազմած էր գաղտնի խմբակցութիւն: Այնուհետեւ գաղտնաբար մտած էր Արեւմտահայաստան ու ծանօթանալով երկրի պայմաններուն, Սալմաստ երթալով հոն լծուած էր կրթական աշխատանքի:

Ագրիպպասեանը վանեցի արմենական էր: Քիւրտերու կողմէ սպաննուած հօր զաւակ՝ ան վայելած էր հովանաւորութիւնը Խրիմեան Հայրիկի եւ ուսումնառութենէ յետոյ շրջագայած էր Հայկական Նահանգները (թերեւս ալ իր կուսակցութեան թելադրութեամբ) եւ 1888-ին Վանի մէջ, ծանօթանալով Գոլոշեանին, անոր հետ անցած էր Սալմաստ, դարձեալ Հաւթվանի մէջ ուսուցչական պաշտօն վարելու:

Իրենցմէ առաջ հոն իբրեւ ուսուցիչ արդէն կը պաշտօնավարէր վանեցի արմենական Կուլաքսըզեանն ալ, որ Էջմիածնայ Գէորգեան ճեմարանէն հեռացած էր 1885-ին եւ պահ մը ուսուցչութիւն ըրած էր Վանի մէջ:

1889 Մայիս 16-ի գիշերը երեք երիտասարդները ճամբայ կ'ելլեն դէպի Արեւմտահայաստան: Անոնք զինուած էին հրացաններով եւ կը ծրագրէին կազմակերպել հայդուկային խումբեր, իբրեւ նախապատրաստութիւն ճակատագրական կռիւին, որ օր մը պիտի պատահէր թուրքերու դէմ:

Դէպի Վան տանող ճամբուն վրայ, Չուխ Կետուկ կոչուած կիրճին մէջ, անոնք պատահաբար կը հանդիպին թուրք ոստիկաններու, որոնք կասկածելով այս երեք զինեալներէն՝ կը սկսին հրացանաձգութեան: Կը թուի թէ Կուլաքսըզեանը խոյս կու տայ ընդհարման առաջին իսկ պահէն. բայց Վարդան եւ Յովհաննէս դիրքեր գրաւելով կը դիմադրեն երկար ժամանակ ու կը նահատակուին հերոսի մահով:

Իր ժամանակին դէպքը կը հանէ շատ մեծ աղմուկ, մանաւանդ որ նահատակներուն վրայէն գտնուած թուղթերը թրքական իշխանութիւններուն կը յուշեն գաղտնի տարածուն կազմակերպութեան մը գոյութիւնը:

Հայկական շրջանակներու մէջ երիտասարդութիւնը կ'ոգեւորուի արեան այս հեղումով: Շատեր կ'ուզեն հետեւիլ երկու նահատակներուն օրինակին: Անոնց սպանութիւնը երիտասարդութեան համար կ'ըլլայ իսկական մարտահրաւեր մը՝ նետուելու յեղափոխական սրբազան գործին մէջ³⁸:

Բ.) Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը.-

Վասպուրականի մէջ պատահած զինեալ բախումները, ուր հայ մարտիկները յաղթական դուրս եկած էին, լուրջ մտահոգութիւն պատճառած էին սուլթանական վարչամեքենային: Անհրաժեշտ էր կասեցնել թափը ահագնացող վտանգին եւ չեզոքացնել Վանի յեղափոխական հնոցը: Այս միտումով ալ 1896-ի Յունուարին Վան կը հասնի սուլթանական թիկնապահ Ֆերիտ Սաատէտտին փաշան³⁹, որ մէկ կողմէ կը փորձէ ծանօթանալ տիրող կացութեան բոլոր մանրամասնութիւններուն, իսկ միւս կողմէ կը սկսի հայերու դէմ գրգռել քիւրտ ցեղապետերը, ի մասնաւորի Շաքիրը:

Նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներու ամբողջացումէն ետք, Սաատէտտին Սուլթանին պարբերաբար կը ներկայացնէ այնպիսի տեղեկագրեր, որոնց մէջ Վանի յեղափոխականներու ճնշումը կը նկատէ դժուարութիւններով լի գործ մը՝ կարելի առաւելագոյն չափով զինուորական ուժ բերել տալու դիտաւորութեամբ⁴⁰: Ան հեռագրի մը մէջ կ'ըսէ. «Եթէ Վանի մէջ

³⁸ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 7: Վահան Փափագեան իր «Իմ յուշերը» գիրքին Ա. հատորին մէջ (էջ 132) կը գրէ թէ այդ կռիւը ազդանշան մըն էր եւ երիտասարդ տարրերն այնուհետեւ սկսան աւելի տենդով ու թափով զինուիլ: Իսկ Արտակ Դարբինեան իր նշումած յուշագրութեան մէջ (էջ 123) կ'ընդգծէ թէ երկու հերոսներուն նահատակումը նոր եւ իրական հեռանկար մը կը բանար արմենական երիտասարդութեան առջեւ, որուն մինչ այդ ճանչցած զոհողութեան դաշտը բանտէ եւ արքայի անդին չէր անցներ:

³⁹ Կ'ըսուի թէ Սաատէտտին Ախլաթի Ծղակ գիւղէն Կարապետ անունով հայու մը Յունան անունով որդին էր (Տէր Մկրտիչեան Ե., «Գանձեր...», էջ 458):

⁴⁰ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 98:

եղած կարելու որ ժը չկոտորուի, կրնայ չափազանց վնասակար դառնալ կառավարութեան համար»⁴¹:

Մայիս 29-էն 31, Վանի թրքաբնակ թաղերէն կը սկսին տեղի ունենալ հրացանաձգութիւններ հայերու դէմ, հաւանաբար մղելու որ Վանի շրջակայ վայրերուն եւ թրքական թաղերուն մէջ ցրուած հայերը՝ իրենց բնակավայրերը լքելով՝ մէկտեղուին Վանի հայաբնակ թաղամասերուն մէջ, թերեւս ալ հաշուեյարդարի գործընթացը դիւրացնելու միտումով...: Իրօք, հայերը կը փութան ապաստանիլ աւելի ապահով նկատուած շրջանները:

Վճռական հարուածին ձեռնարկելու հողը պատրաստ էր այլեւս: Կը մնար սպասել պատեհ առիթի մը:

Յունիս 2–3ի գիշերը, Վանի Այգեստանին արեւելակողմը գտնուող Ուրբաթ Առուին մօտ թուրք զինուորներ ընդհարում մը կ'ունենան քիւրտ մաքսանենգներու հետ⁴²: Կը սպաննուին թուրք յիսնապետ մը եւ զինուոր մը: Կատարուածը հայերուն վերագրելով եւ դիակները թաղերուն մէջ ցուցադրելով՝ թրքական իշխանութիւնները թուրք ամբոխին մէջ կը հրահրեն վրէժի եւ ատելութեան զգացումները: Նոյն օրը տեղի կ'ունենան նաեւ կարգ մը ձերբակալութիւններ⁴³:

Ակնարկուած միջադէպը կ'ըլլայ գլխաւոր ազդանշանը ջարդերու սկզբնաւորութեան: Յունիս 3ի առաւօտեան կառավարական զինանոցէն թուրք խուժանին կը բաժնուի մեծ քանակութեամբ զէնք ու փամփուշտ: Մզկիթներու մէջ *անհաւատ* հայերու դէմ պայքարի կոչեր կ'ուղղուին:

⁴¹ Աղայեան Ծատուր, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից», Երեւան, 1976, էջ 150:

⁴² Ըստ Անուշաւան Տէր Մկրտիչեանի, ընդհարումը տեղի կ'ունենայ հնչակեան խումբի մը եւ թուրք մաքսանենգներու միջեւ («Չարթօնք» օրաթերթ, 5 Յուլիս 1977): Հայրենի պատմաբաններուն նման մենք կը նախընտրենք հետեւիլ Եկարեանի վերը արձանագրուած տեղեկութեան. մանաւանդ որ «Հնչակ»ի 1896 Սեպտ. 1-ի թիւով ալ այդ բախումը վերագրուած է թուրք զինուորներու եւ քիւրտ մաքսանենգներու:

⁴³ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 99:

Նոյն օրը կեսօրէ ետք⁴⁴ կը սկսի թուրք խուժանին յարձակումը: Թուրքերէ շրջապատուած Հայկականքի, Թորամանի, Ս. Յակոբի եւ Շանոյի-Դարի հայութիւնը համարեա ամբողջովին կը կոտորուի⁴⁵: Բիչեր հնարաւորութիւնը կ'ունենան խոյս տալու դէպի գլուս հայաբնակ թաղերը, որոնք արդէն առնուած էին պաշտպանողական օղակի մը մէջ:

Թուրք եւ քիւրտ միացեալ ուժերուն գլխաւոր թիրախը կը դառնայ համարեա բոլորովին հայերէ բնակեցուած Այգեստանը: Բոլոր վանեցիները, այր թէ կին, պատանի թէ ծերունի, կը մասնակցին ինքնապաշտպանական գործողութիւններուն: Պատանիները յաճախ կը կատարեն թղթատարի կամ լրարերի պարտականութիւն: Կանայք կը զբաղին թիկունքային աշխատանքներով եւ վիրաւորները դարմանելով:

Ինքնապաշտպանութեան հիմնական գործողութիւններուն կը հետեւի Մկրտիչ Աւետիսեանի գլխաւորութեամբ եւ հնչակեան Մարտիկի (Մարտիրոս Սարուխանեան) ու դաշնակցական Պետոյի (Աղեքսանդր Պետրոսեան) մասնակցութեամբ կազմուած Զինուորական Մարմինը:

Այդ Մարմինն ցուցումով եւ թելադրութիւններով աւելի քան երեք տասնեակ դիրքերու ետին խմբուած հայ քաջամարտիկներ, մեծ մասամբ արմենական, հակառակ զինամթերքի եւ սննդեղէնի տակաւ սաստկացող կարիքին՝ չորս օր շարունակ անձնուրացա-

⁴⁴ Բոլոր կարելոր աղբիւրները ջարդերու իբրեւ սկիզբ կը նշեն Յունիս 3ը: Միայն Եկարեանն է որ կը խօսի Յունիս 5ի մասին: Տպագրական վրէ՛պ:

⁴⁵ Ինչպէս Եկարեան, այնպէս ալ այլ աղբիւրներ յիշեալ թաղամասերու կողքին նշած են անունը Կոր-Դարի եւս, ըսելով թէ անոր ալ հայ բնակիչները կոտորուեցան: Մինչդեռ այդ աղբիւրները անդրադարձած են նաեւ Արշակ Չթչեանի առասպելական թուացող հերոսութեան, ընդգծելով թէ անոր շնորհիւ թրքական յառաջխաղացքը պահ մը կասեցաւ Կոր-Դարի մէջ...: Ակներեւ հակասութիւն: Արշակ Չթչեանի միօրեայ անվիատ եւ քաջարի դիմադրութիւնը ենթադրաբար առիթ տուած պէտք է ըլլայ շրջանի հայոց, որ ժամանակ գտնեն խուսափելու կոտորածէն:

բար կը դիմադրեն թուրք կանոնաւոր ուժերու եւ քիւրտ ու թուրք խուժաններու յարձակումներուն: Աւելին՝ անոնք նոյնիսկ Յունիս 7-ին կ'անցնին հակայարձակումի եւ կը գրաւեն թրքական երկու թնդանօթ:

Ստեղծուած կացութիւնը յատկապէս մեծ անհանգստութիւն պատճառած էր Վանի անգլիական հիւպատոս Ուիլիըմզին⁴⁶: Ռուսիոյ սահմանամերձ Վասպուրականի մէջ հայերու յաջողութիւնը կրնար ի վերջոյ վերածուիլ ռուսական յաջողութեան մը, եւ այս բանին առաջքը առնուելու էր:

Ուիլիըմզ, իբրեւ հաշտարար միջնորդ, Յունիս 6-ին օսմանեան կառավարութեան անունով առաջարկած էր հաշտութիւն՝ պայմանաւ որ հիւպատոսարաններու միջոցով հայոց զէնքերը յանձնուին թուրք կառավարութեան եւ ինքնապաշտպանութեան պարագլուխները անձնատուր դառնալով տարուին եւրոպական որեւէ նաւահանգիստ: Պայմանները չընդունուելու պարագային՝ քաղաքը ենթակայ պիտի ըլլար ռմբակոծման սպառնալիքի գործադրութեան:

Զին. Մարմինը նախ մերժած էր այս առաջարկները եւ մարտերը շարունակուած էին: Բայց ի վերջոյ նկատելով որ սպառած զինամթերքով ու սննդեղէնով, առանց դուրսէն օժանդակութեան ալ որեւէ յոյս ունենալու, անկարելի պիտի ըլլար շարունակել մարտական գործողութիւնները, նաեւ մտածելով ժողովուրդին անվտանգութեան մասին, ինքնապաշտպանութեան ղեկավարները, որոնք ոչ մէկ հաւատք ունէին թուրքերու եւ օտար հիւպատոսներու խոստումներուն վրայ,՝ ականայ ընդունած էին Սաատէտտինի պայմանները.՝ դադրեցնել դիմադրութիւնը եւ զէնքերով միասին բոլոր մարտիկներով հեռանալ Պարսկաստան:

Յունիս 8ի երեկոյեան հայ մարտիկները կը հաւաքուին Վարագայ լեռը, հոնկէ Պարսկաստան անցնելու համար: Երթուղիին շուրջ կը ծագին տարակարծութիւններ եւ հնչակեան ու դաշնակցական

⁴⁶ Աղբիւրները կը նշեն թէ Ուիլիըմզ ինք թելադրած է թուրքերուն՝ թնդանօթներով հայերը ընկնել, եւ նոյնիսկ թրքական դիրքերը դիմելով՝ ցուցումներ տուած է թնդանօթաձիգներուն:

խումբերը կը բաժնուին Աւետիսեանէն, որ կը բռնէ Բարթողիմէոսի Դաշտէն անցնող ճամբան:

Բարթողիմէոսի Դաշտին մէջ, սակայն, Աւետիսեանի խումբը կը պաշարուի 8–10,000 հաշուող թուրք զինուորներու եւ քիւրտ զինեալներու կողմէ ու պատուաւոր դիմադրութենէ մը ետք կը նահատակուին բոլորը, բացի մի քանիներէ: Նահատակութեան պսակին կ'արժանանան նաեւ Մարտիկի ու Պետոյի խումբերը:

Թրքական իշխանութիւնները կանխագգուշական ամէն միջոցի դիմած էին, արգիլելու Պարսկաստանէն որեւէ օգնական ուժի հասնիլը Բարթողիմէոսի Դաշտ:

Աւետիսեանին ուղեկցած խումբի անդամներուն թիւը զանազան աղբիւրներու համաձայն տարուբերած է 360-էն 1000-ի միջեւ: Ա. Տէր Մկրտիչեան այս մասին կատարած ըլլալով բժախնդիր ուսումնասիրութիւն մը, կը պարզէ թէ Բարթողիմէոսի Դաշտին մէջ նահատակուածներու ընդհանուր թիւը եղած է 384⁴⁷, որոնցմէ առնուազն 230-ը երդուեալ արմենականներ էին:

Բայց այս չէ կարելորը: Աւետիսեանի, Մարտիկի եւ Պետոյի խումբերուն նահատակումով Վանը կը կորսնցնէր իր երիտասարդութեան լաւագոյն ու կարեւորագոյն մէկ մասը, եւ Վանի մէջ ծանրօրէն կը վնասուէր յեղափոխական գործը:

Երեք կուսակցութիւններու համագործակցութեան շնորհիւ Վանի հայութիւնը գերծ մնաց այն կոտորածներէն, որոնց ենթարկուեցաւ Արեւմտահայաստանի միւս շրջաններու հայութիւնը: Վանի ինքնապաշտպանութիւնը, ծանօթ՝ Մեծ Դէպք անունով, փաստօրէն, շատերու համար յստակօրէն ընդգծեց այն իրողութիւնը, թէ միասնական ճիգերով, ժողովրդային բոլոր խաւերու եւ հոսանքներու գործակցութեամբ միայն կարելի է հասնիլ յաջողութեան...:

Անիկա նաեւ ցոյց տուաւ թէ իսկական յեղափոխական գործը առաջ պէտք է տանիլ լուռ եւ անաղմուկ գործունէութեամբ, թղթեայ պոռոտախօսութիւններու փոխարէն՝ զինակուտակումի եւ զինավարժութեան զարկ տալով...:

⁴⁷ Տէր Մկրտիչեան Ե., նշ. աշխ., էջ 491:

Արդարությունը, սակայն, կը պահանջէ նշել թէ Վանի ինքնապաշտպանութեան յաջողութիւնը առաւելաբար կը պարտինք արմենականներուն, որովհետեւ մինչդեռ հնչակեաններն ու դաշնակցականները անոր կը մասնակցէին շուրջ ութ տասնեակ մարտիկներով եւ սակաւաթիւ հրացաններով, արմենականները մարտի դաշտ կը նետէին մօտ 105 Խումբ⁴⁸, շուրջ 500 հրացաններով⁴⁹:

Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը կը կազմէ փառապսակը Արմենական Կուսակցութեան գործունէութեան:

* * *

⁴⁸ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 72:

⁴⁹ «Նիւթեր Հ. Յ. Դ. պատմութեան համար», Գ. հատոր, իմր. Հրաչ Տասնապետեան, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, էջ 102:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԴԷՊՐԷՆ ՅԵՏՈՅ

1896-ի հերոսական ինքնապաշտպանությունն էտք Արմենական Կուսակցությունը Վասպուրականի եւ Ատրպատականի մէջ կը դադրի ունենալէ այն կշիռը, զոր ունէր 96-էն առաջ, պահպանելով հանդերձ ժողովուրդին մօտ իր հմայքը⁵⁰: Թէ՛ Վասպուրականի եւ թէ՛ Ատրպատականի կարելոր շրջաններուն մէջ տիրապետող ուժ կը դառնայ Դաշնակցութիւնը: Բացառութիւն կը կազմէ, սակայն, Վանը:

Այս երեւոյթը պատճառ կը դառնայ որ հետագային կարգ մը հեղինակներ անհիմն կերպով յայտարարեն թէ 96-էն էտք արմենականները կը ձուլուին Դաշնակցութեան մէջ եւ կը դադրին գոյութիւն ունենալէ: Մինչդեռ իրողութիւնն այլ է, ինչպէս պիտի տեսնենք:

Մեծ Դէպքին յաջորդող տարիները երեք կուսակցութիւններուն համար ալ կը դառնան վերականգնումի շրջան մը: Վերականգնում՝ որ, սակայն, կ'ընթանայ շատ դանդաղ, ոչ միայն յեղափոխական գլխաւոր ուժերու կորուստին հետեւանքով, այլեւ մանաւանդ անոր համար որ ժողովուրդը դարձած էր չափազանց վերապահ եւ զգուշաւոր, Դէպքին յաջորդած թրքական վայրագ միջոցառումներուն իբրեւ հետեւանք:

Հարկաւոր էր համբերատար աշխատանքով քանդել ժողո-

⁵⁰ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 127 եւ 135: Հոս պէտք է նշել թէ Ատրպատականի մէջ կուսակցական գործունէութիւնը տուժած էր մանաւանդ Խանասորի արշաւանքին հետեւանքով (Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 100):

վուրդին մեջ յառաջացած հոգեբանական պատնեշները եւ յեղափոխական գործին նկատմամբ վերստին արթնցնել վստահութիւնը:

Արմենական Կուսակցութեան գործիչները, գլխաւորութեամբ Վանի բոլոր ծխական վարժարաններու տեսուչ Եղիշէ Քոնտաքճեանի, առաջին հերթին կը լծուին այդ գործին. հետեւաբար Սալմաստէն Վան զինատարական աշխատանքէն աւելի անոնք ուժ կուտան տակաւին իրենց հովանիին ներքեւ գտնուող դպրոցներու մէջ յառաջ ընթացող դաստիարակչութեան:

Վերապրող արմենականներէն եւ նորահաս երիտասարդներէն կարճատեւուման մէջ կը կազմակերպուին 3 խումբեր⁵¹. բայց արդիւնքը տակաւին հեռու էր գոհացուցիչ ըլլալէ⁵²:

Կազմակերպչական աշխատանքներուն որոշ զարկ կու տայ Վանի մէջ ներկայութիւնը Արմենակ Եկարեանի, որ Խանասորի արշաւանքը կասեցնելու մտահոգութեամբ Էջմիածնէն (ուր Գր. Պէօզիկեանի հետ գացած էր Խրիմեան Հայրիկի հետ խորհրդակցութիւններ ունենալու) Սալմաստ փութալէ ետք, Դաշնակցութեան յամառութեան ի տես 40 հոգինոց խումբով մը անցած էր Վան, Խանասորի արշաւանքին հետեւելիք հաւանական որեւէ ժխտական անդրադարձէ Վանի հայութիւնը գերծ պահելու կանխահոգութեամբ:

Քոնտաքճեանի մահէն ետք (1898), կուսակցութեան ղեկը ձեռք կ'առնէ Գրիգոր Աճեմեանը, որուն օրով ալ կրթական կազմակերպչական եւ քիչ անգամ զինատարական աշխատանքները կը շարունակուին առաջուան նման:

Վանի կրթական հաստատութիւնները համարեա ամբողջովին կը ղեկավարուին արմենական տնօրէններով եւ ուսուցիչներով: Անոնցմէ կարեւորագոյնին՝ Վարազայ Ժառանգաւորացին տեսչութիւնը, օրինակ, 1905-ին կուսակցութեան որոշումով կը վստահուի

⁵¹ Տէր Մկրտիչեան Ա., «Յուշեր Վանի անցեալէն», «Պայքար» օրաթերթ, 24 Յուլիս 1959:

⁵² Ըստ Արտակ Դարբինեանի, ղեռ մինչեւ 1901 Արմենականութիւնը չէր կրցած վերակազմակերպուիլ բաւարար չափով. բայց՝ Դաշնակցութիւնը եւս (Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 106):

Արտակ Դարբինեանին:

Կուսակցութեան շարքերուն մէջ մեծ աշխուժութիւն կը տիրէ մանաւանդ արաբկիրցի Սեպուհի (Երուանդ Քէօսէեան) իբրեւ գործիչ Վան մուտքէն (1906) ետք: Սեպուհ կը բազմացնէ արմենական խումբերը, կը հիմնէ Արմենական Երիտասարդաց Միութիւնը,– որ կ'օժտուի «Կայծ» խմորատիպ խօսափողով՝ Վարդան Պապիկեանի խմբագրութեամբ,– եւ մղում կու տայ ինքնապաշտպանութեան գաղափարին:

Ռ. Ա. Կ.ի Կեդրոնական Արխիւին մէջ գտնուող եւ Սեպուհի ստորագրութիւնը նշող փաստաթուղթի մը համաձայն, 1906-ի առաջին կիսամեակին կուսակցութեան միայն Առաջին Ծրջանակը (Վան) իր հինգ Համայնքներով (չորսը՝ քաղաքային, մէկը՝ գիւղական) կը բաղկանար 846 անդամներէ⁵³:

Սեպուհի գործունէութիւնը կարճատեւ կ'ըլլայ, սակայն, որովհետեւ 1908-ի Յունուարին ան կը սպաննուի թուրք ոստիկաններու գնդակով:

Շատ չանցած արդէն Արմենականութիւնը կը վերանի Ռամկավարութեան:

* * *

⁵³ Դաշնակցական գործիչներ իրենց յուշերուն մէջ թերագնահատած են արմենականներու ուժը, յաճախ առանց անդրադառնալու թէ տկարացած եւ ձուլուած կուսակցութիւն մը չէր կրնար իր հակակշռին տակ պահել քաղաքի մը կրթական հաստատութիւններու ցանցը: Երբ արմենականները Վանի մէջ ունէին առնուազն 23 խումբ (115–345 անդամ), Դաշնակցութիւնը ունէր 15–20 խումբ կամ 100–150 անդամ («Արամը», էջ 307–308): Իսկ երբ ունէին 846 անդամ Վանի եւ շրջակայ գիւղի մը մէջ, Ռուբէն 1905–06 թուականներուն ակնարկելով կը գրէ. «Այդ թուականին Արմենականութիւնը ձուլուելով Դաշնակցութեան մէջ, գրեթէ կը մեռնի իր ծննդավայրին մէջ» (Ռուբէն, նշ. աշխ., էջ 169)....

ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հնչակեան եւ Դաշնակցական կուսակցութիւններուն հետ արմենականներու յարաբերութեան անդրադարձողը կը նշմարէ թէ աղբիւրները համարեա ոչինչ կ'ըսեն արմենական-հնչակեան յարաբերութեան մասին: Միայն Եկարեան կը նշէ թէ արմենականներու յարաբերութիւնները Դաշնակցութեան հետ աւելի սերտ էին քան հնչակեաններու, ակնարկելով նախահերոսամարտեան շրջանին⁵⁴:

Հետեւաբար հոս կը հարկադրուինք մեր ուշադրութիւնը կեդրոնացնել արմենական-դաշնակցական յարաբերութիւններուն վրայ, դիտել տալէ ետք թէ՛ այնքան ատեն որ Հնչակեան Կուսակցութիւնը արեւմտահայ գաւառին մէջ կը ծաւալէր ընկերվարական քարոզչութիւն եւ կը հետեւէր ցուցական գործունէութեան, Արմենականութիւնը անոր հանդէպ ալ մօտաւորապէս կ'ունենար այն դիրքը, գոր որդեգրած էր Դաշնակցութեան պարագային:

Արմենական Կուսակցութիւնը Վանի եւ Վասպուրականի ու Ատրպատականի կարգ մը շրջաններուն մէջ արդէն բաւական տարածուած եւ արմատաւորուած էր, երբ յաջորդաբար հնչակեան ու դաշնակցական գործիչներ կը սկսին թափանցել յիշեալ շրջանները:

Սկզբնական շրջանին արմենականները, մեկնելով ազգին մէջ ներքին ուժ գոյացնելու իրենց ծրագրային հաւատամքէն եւ բոլոր խաւերուն գործակցութեամբ յեղափոխական գործը յառաջ տանելու սկզբունքէն, թոյլատու կը գտնուին անհատ յեղափոխականներու թէ զանազան կազմակերպութիւններու հանդէպ եւ նոյնիսկ կ'աջակցին անոնց: Այս թոյլատու կեցուածքը, որ կը կազմէ ապա-

⁵⁴ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 41:

ցոյցը արմենականներու անայլամերժութեան եւ մենատիրական ախտէն զերծ մնալուն, թերեւս նաեւ կը բացատրուէր անով, որ նորահաս գործիչներն ու մարտիկները կը ցուցաբերէին հանդուրժողութիւն եւ զգուշաւորութիւն՝ այնքան ատեն որ զուրկ կը մնային զօրաւոր յենարանէ: Իսկ բառին բուն առումով զօրաւոր յենարան անոնք չկրցան ունենալ մինչեւ 1896 մանաւանդ Վասպուրականի մէջ, ուր տիրող մտայնութիւնը արմենական էր⁵⁵: Այսինքն՝ այդ շրջանի հայութեան համեմատաբար գիտակից մեծամասնութիւնը իւրացուցած էր Արմենականութեան մերձեցումը ազգային-ազատագրական պայքարին հանդէպ:

Փաստերը ցոյց կու տան թէ, օրինակ, Վանի մէջ Դաշնակցութեան հիմնադիրը՝ Պետօն (Աղեքսանդր Պետրոսեան), Վան մտած է արմենականներու միջոցաւ⁵⁶: Նոյնպէս՝ թուրք եւ պարսկական սահմանին վրայ գտնուող Տէրիկի վանքը, որ արմենականներու գլխաւոր կայաններէն մին էր, կուսակցութեան կողմէ սիրայօժար տրամադրուած էր նաեւ դաշնակցական մարտիկներու, որոնք արմենականներու հետ համերաշխ էին եւ քիչ անգամ կ'ունենային վեճեր⁵⁷:

Պետօն նախ ծածուկ կը պահէիր կուսակցական պատկանելութիւնը եւ յենարանի մը կազմութեան կանխահոգութեամբ՝ սերտ կապեր կը ջանայ հաստատել արմենականներու հետ⁵⁸: Շրջահայեաց եւ լուրջ գործունէութիւն ցուցաբերելով՝ ան յաջողի գրաւել արմենականներու համակրանքը եւ նոյնիսկ արմենականներու կողմէ կ'ուղարկուի 1892-ին Թիֆլիս գումարուած Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովին⁵⁹:

Այդ ժողովին, ընդառաջելով Հ. Յ. Դ.ի հրաւերին, Արմենական Կուսակցութեան իբրեւ լիազօր ներկայացուցիչներ կը մասնակցին Գրիգոր Պէօզիկեանն ու Գարեգին Մանուկեանը՝ համաձայնու-

⁵⁵ Փափագեան Վ., նշ. աշխ., էջ 119:

⁵⁶ Եկարեան Ա., նշ. աշխ. էջ 38:

⁵⁷ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 40:

⁵⁸ Ռուբէն, նշ. աշխ., էջ 84:

⁵⁹ Եկարեան Ա., նշ. աշխ. էջ 38 եւ 41:

թեան մը յանգելու նպատակով, բայց համաձայնութիւնը չի կայանար, քանի որ Դաշնակցութիւնը «կը պահանջէր տառացիօրէն հպատակիլ իր բոլոր ցուցումներուն, որպէս կեդրոնական մարմին: Այս յաւակնոտ պահանջքը, ի հարկէ, կը մերժուի... մերինները պահանջ կը դնեն օգնել միայն իրենց եւ չխառնուիլ իրենց ներքին գործունէութեան, ինչ որ կը մերժուի դաշնակցականներէն, որոնց մէջ կուսակցական եսը ուրիշ ամէն նկատումէ աւելի բարձր էր...»⁶⁰:

Թիֆլիսէն դարձին՝ Պետօն այլեւս յստակօրէն կը բացայայտէ իր դաշնակցական ըլլալը եւ առաջին առթիւ արմենականներէն Ոսկան Նազարը, Վազգէնը (Տիգրան Տէրոյեան, որ Դաշնակցութեան կարեւորագոյն գործիչներէն մին եղաւ Վանի մէջ) եւ արմատական արմենականներէն վեց խումբ կը դարձնէ դաշնակցական, այդպիսով հիմը դնելով Վանի դաշնակցական շրջանակին: Ասոր հետեւանքը կ'ըլլայ Պետոյի եւ արմենականներու յարաբերութեանց խզումը⁶¹:

Ուշագրաւ է որ Դաշնակցութիւնը Վասպուրականի մէջ կը փորձէ ուռճանալ արմենականներու ստեղծած պարարտ հողին վրայ եւ արմենականներու հաշուոյն, մանաւանդ որ արմատական արմենականներ զիրենք խանդավառող տուեալներ կը գտնէին դաշնակցական քարոզչութեան եւ գործելակերպին մէջ:

Այս խզումէն ետք արմենականներն, ըստ երեւոյթին, կ'անցնին Դաշնակցութեան տարածումը կասեցնելու աշխատանքի մը, - որ կը սահմանափակուի սոսկ քարոզչութեամբ՝ առանց ուժի գործածութեան, - մանաւանդ որ մտայնութեանց մէջ եւ գործելակերպի մասին արմենականներու եւ դաշնակցականներու միջեւ եղած անջրպետը հետզհետէ կը լայննար⁶²:

Այդ աշխատանքը կը տարուէր մինչեւ իսկ Մեծ Դէպքի նախօրեակին: 1896 Փետր. 15 ին Պետօն կը գրէր. «Բանտից ելած Աւետ(իսեանը) ամէն գէշ միջոց ձեռք է առած քաղաքում մեր խմբերը խառնելու, բամբասելով, թէ Դաշնակցութիւնը մտադիր է կոտորած

⁶⁰ Նոյն, էջ 41:

⁶¹ Ռուբէն, նշ. աշխ., էջ 85:

⁶² Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 45:

անելու, ու քաշում է դեպի արմենականները...»⁶³:

Հակառակ իրերու այս դրություն, Վասպուրականի հայության ֆիզիքական գոյության ապահովումը նոյն խրամատներու ետին կը մէկտեղէ երեք կուսակցութիւնները 1896ի Յունիսին՝ արմենականներու գլխաւորութեամբ: Ասիկա հնարաւոր կը դառնայ նաեւ անոր համար որ առհասարակ պայքարը գերագոյն նպատակին շուրջ չէր (երեք կուսակցութիւններն ալ հայ Ժողովուրդի ազատագրութեան հետամուտ էին) այլ՝ որդեգրուած միջոցներուն⁶⁴, որոնք ջարդի մը հեռապատկերին առջեւ կը նոյնանային...:

Մեծ Դէպքին յաջորդող տարիներուն կուսակցութիւնները կը լծուին վերակազմակերպումի աշխատանքին:

1902-ին Վան կը մտնէ դաշնակցական գործիչ Վարդգէսը (Յովհաննէս Մերենկիւլեան): Ան իր պաշտպանած տեսակէտներով այնքան կը մօտենայ Արմենականութեան հայեցակէտներուն, որ արմենականներու Մասնաժողովը նոյնիսկ կու գայ այն եզրակացութեան՝ թէ կարելի է դաշնակցականներու հետ ստեղծել համագործակցութիւն եւ ապա ի մի ձուլել երկու կազմակերպութիւնները⁶⁵: Բայց Վարդգէսը շուտով կը ձերբակալուի:

Երբ Վահան Փափազեան (Կոմս) իբրեւ գործիչ կը մտնէ Վասպուրական, հոն կը գտնէ քայքայման եւ յուսալքման մատնուած դաշնակցական շրջանակ մը, որմէ Վանի մէջ անվնաս մնացած էին միայն հինգ խումբեր⁶⁶:

Այնուհետեւ Դաշնակցութիւնը կը սկսի հետզհետէ Վան ուղարկել այլ գործիչներ եւս, ինչպէս Արամ Մանուկեանն ու Ռուբէնը (Մինաս Տէր Մինասեան):

Դաշնակցութիւնը, մէկ կողմէ անլի տարածուելու, իսկ միւս կողմէ արմենականներու հօգրացումը կասեցնելու դիտաւորութեամբ, կը սկսի դիմել նոր միջոցներու եւ նոյնիսկ զէնքի գործածութեան:

⁶³ «Նիւթեր Հ. Յ. Դ. պատմութեան համար», Բ. հատոր, էջ 24:

⁶⁴ Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 152:

⁶⁵ Նոյն, էջ 131–132:

⁶⁶ Փափազեան Վ., նշ. աշխ., էջ 111–113:

Ան, նախ եւ առաջ, յաջողութեան հասնելու գլխաւոր գրաւականը կը գտնէ Վանի դպրոցներուն մէջ: Բայց ոչ միայն դպրոցները հիմնականին մէջ արմենականներու հակակշռին ենթակայ էին⁶⁷, այլեւ Վանի զարգացած տարրը գրեթէ ամբողջութեամբ կը հետեւէր Արմենականութեան: Դպրոցներէն դուրս եկող աշակերտներն ալ բնականաբար կը յարէին Արմենական Կուսակցութեան: Ուրեմն անհրաժեշտ էր յատուկ աշխատանք տանիլ այս ուղղութեամբ եւ զանոնք ներգրաւել՝ ժողովրդական լայն գործունէութիւն վարելու համար⁶⁸: Դաշնակցութեան փորձերը կը յաջողին եւ Ռուբէնի շնորհիւ 1905-ին Դաշնակցութեան կը միանան արմենական Համագասպ Բաղէշցեանն ու Ղեւոնդ Մելոյեանը իրենց հետեւորդներով: Հետզհետէ դաշնակցականներուն կը յարին նաեւ այլ զարգացած տարրեր:

Հողը նախապատրաստուած համարելով, Դաշնակցութիւնը կ'որոշէ անցնիլ վճռական հարուածի եւ Վասպուրականի *Գ. ռայոնական ժողովը* Յունիս 27-ի իր նիստով կը յանգի Արմենականութիւնը հաշուեյարդարի ենթարկելու եզրակացութեան:

«Ի նկատի ունենալով, որ Տաճկաստանում յեղափոխական տարրեր կուսակցութիւնների գոյութիւնը չարիք է, իսկ ներկայ հանգամանքներում Արմենականների գոյութիւնը լոկ թիւրիմացութիւն, որոշուեցաւ քաղաքում գոյութիւն պահող Արմենականները ժամանակի ընթացքում խաղաղ փրոփականտայով քաշել Դաշնակցութեան մէջ: Իսկ եթէ նրանք դուրս գալով քաղաքից կուսակցական կոիւներ առաջացնելով սկսեն ոտնձգութիւններ անել այն գիւղերում ու գաւառներում, ուր Դաշնակցութիւնը արդէն կազմակերպուած է, նախ պետք է աշխատել խաղաղ միջոցներով ատելութիւնների առաջն առնել, իսկ եթէ խաղաղ միջոցները չբաւականանան, իբրեւ փոքրագոյն չարիք, պետք է դիմել բռնի ուժի, զինաթափ անելով դրանց»⁶⁹...:

Այս ժողովէն անմիջապէս ետք դաշնակցական գործիչները

⁶⁷ «Արամը», էջ 227:

⁶⁸ Նոյն, էջ 308:

⁶⁹ Անդ:

նոյնիսկ հրապարակաւ կը սկսին յայտարարել թէ Արմենականութիւնն իբրեւ կուսակցութիւն իրաւունք չունի իր գոյութիւնը պահելու⁷⁰:

Իրենց ծրագիրը յաջողեցնելու համար, դաշնակցականները կը դիմեն երեք միջոցներու՝ փաղաքշանք եւ խոստումներով սիրաշահում, սպառնալիք եւ ծեծ, մահ՝ անդրդուելիներուն⁷¹: Չանագան շրջաններու մէջ տեղի կ'ունենան մահափորձեր եւ ահաբեկումներ⁷²:

Արմենականները կը բաժնուին երկու խումբի: Մէկ մասը դէմ կ'արտայայտուի եղբայրասպանութեան եւ կը քարոզէ հանդուրժողութիւն. իսկ միւս մասը կը պահանջէ զինեալ ընդդիմութիւն՝ նոյնիսկ մէկի դէմ երեք զարնելու վճռականութեամբ⁷³: Բայց Սեպուհի գլխաւորած առաջին թելն է որ իր տեսակէտը կը պարտադրէ բոլորին, գիտնալով հանդերձ թէ աստիկա կրնայ ըլլալ ի վնաս Արմենական Կուսակցութեան: Այս առումով պերճախօս է Սեպուհի մէկ նամակ-տեղեկագիրը.

«Դաշնակցականներուն հետ որեւէ գործակցութիւն անհնարին է⁷⁴: Չնայած մեր համակերպող ընթացքին, զոր ստիպուած ենք ցոյց տալ *ի սէր մեր դժբախտ ժողովուրդին* (ընդգծումը ինձմէ՝ Վ. Դ.), անոնք կը մնան առաւել քան ամբարտաւան: Մեր զիջողութիւնները անոնք վախի կը վերագրեն եւ հետզհետէ աւելի պահանջկոտ

⁷⁰ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 133:

⁷¹ Տէր Մկրտիչեան Անուշաւան, «Յուշեր Վանի անցեալէն», «Պայքար» օրաթերթ, 24 Յուլիս 1959:

⁷² Չթեան Սահակ, «Հայ յեղափոխական շարժումն արատաւորող դաշնակցական հերոսները Վանում», «Պայքար» օրաթերթ, 13 Յունուար 1953:

⁷³ Ս. Տ. Գ., «Յարութիւն Գ. Կաքաւեան», «Պայքար» օրաթերթ, 4 Մարտ 1951:

⁷⁴ Մինչ այդ Սեպուհի Դաշնակցութեան հետ հասկացողութեան գալու փորձեր ըրած էր եւ նոյնիսկ համաձայնած Վանը բաժնել արմենական ու դաշնակցական զօտիներու (Տեա՛ Փափագեան Վ., նշ. աշխ., էջ 240). բայց այդ ալ օգուտ չէր ունեցած:

կը դառնան եւ յամառ: Այս մարդիկը իրենցմէ դուրս ուրիշ ազգային որեւէ հաստատութիւն եւ կազմակերպութիւն չեն ճանչնար:

«Արդարեւ, այս մտօք, քանի մը օր առաջ սպառնագիր մը ստացայ, որուն մէջ կ'իմացնեն, որ այլեւս Արմենականութիւնը դադրած կը նկատեն իր գոյութեան իրաւունքէն, եւ կ'աւելցնեն որ, յետ այսու, այդ անունով ժողովուրդին խօսողները պիտի ճանչցուին որպէս պառակտիչներ եւ ազատագրութեան գործին վնասողներ: Այս սպառնալիքները բոլորովին անհետեւանք չանցան:

«Քանի մը օր առաջ այս խնդիրը մեր ընկերական ժողովին խորհրդակցութեան նիւթ եղաւ: Շատերը այն եզրակացութեան եկան թէ մերոնց անյիշաչար եւ մեղմ վերաբերումը աւելի ծայրայեղութեանց կը մղէ Դաշնակցութիւնը:

«.....

«Անոնց գրգռիչ եւ կռուազան վերաբերումին նմանօրինակ ընթացք մը ցոյց տալուն, ես, ինչպէս եւ շատերը մեր ընկերներէն, հակառակ ենք, զի հետեւանքը կրնայ շատ ծանր ըլլալ եւ յանգիլ եղբայրասպանութեանց»⁷⁵:

Այս լարուած յարաբերութիւնները կը գոյատեւեն այսպէս մինչեւ արմենականներու միաձուլումը վերակազմեալ հնչակեաններու հետ եւ այդպիսով կազմութիւնը Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան:

* * *

⁷⁵ Եկարեան Ա., նշ. աշխ., էջ 140–143:

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ՎԵՐԱՃԻ ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Կարգ մը գիրքերու (նոյնիսկ Հայկական Սովետական Հանրագիտարանին) եւ յօդուածներու մէջ բոլորովին անհիմն կերպով նշուած է թէ Արմենական Կուսակցութիւնը իր գոյութիւնը պահպանեց մինչեւ 1921 թուականը, երբ միաձուլուելով այլ հոսանքներու հետ՝ ծնունդ տուաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան:

Կան, անշուշտ, տարբեր կարծիքներ յայտնած հեղինակներ ալ: Չորմիսեան, օրինակ, արմենականութեան ֆիզիքական ջնջումը կը կապէ 1896 թուականի հերոսամարտին, կը կարծէ թէ այնուհետեւ կարելի չեղաւ վերակազմել կուսակցութիւնը եւ պահպանողական արմենականները հեռու մնալով կազմակերպութենէ՝ Ռ. Ա. Կ.ի կազմութենէն յետոյ անդամագրուեցան անոր...⁷⁶:

Վանեցի ռամկավար Լեւոն Գազանճեան ալ կը գրէ թէ Արմենական Կուսակցութիւնը 1888-էն մինչեւ 1915 կապուած մնաց իր անունին եւ յետոյ կապուեցաւ Սահմանադրական Ռամկավար Ազատական Կուսակցութեան (?)...⁷⁷:

Յիշեալ երկու հրատարակութիւններուն մէջ նման սխալ տեղեկութիւններու ամփայտութիւնը եթէ հասկնալի է, սակայն առնուազն տարօրինակ են հայրենական ակադեմական հրատարակութեան մը մէջ պատմաբան Ազատ Համբարեանի գրչով կատարուած հաստատումները: Ան կը հաղորդէ թէ Պարսկաստանի արմենականներ-

⁷⁶ Չորմիսեան Լ., նշ. աշխ., էջ 201:

⁷⁷ Գազանճեան Լ., նշ. աշխ., էջ 177:

րու ղեկավար Գ. Պեօզիկեան 1906-ին Պուլկարիոյ մէջ հանդիպելով վերակազմեալ հնչակեաններու կամ Յեղափոխական Միութեան պարագլուխներուն, կը միաւորէ երկու կուսակցութիւնները, որոնց 1907-ի սեպտեմբերին կը միանան Եգիպտոսի վերակազմեալ հնչակեանները՝ Տամատեանին գլխաւորութեամբ. իսկ 1908 Յունուար 1-ին բոլոր արմենականներն ու վերակազմեալ հնչակեանները կը միաձուլուին *Միացեալ Հայ Յեղափոխական Կազմակերպութեան* մէջ: Յիշեալ կազմակերպութիւնը 1908 Հոկտեմբերին կ'որոշէ ինքզինք անուանել *Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւն*, որուն գործելավայրը հիմնականին մէջ Վասպուրականն էր...⁷⁸:

Ինչ կ'ըսեն մեր տուեալները:

1906-ին իբրեւ գործիչ Վան մեկնած Սեպուհի փոխարէն մինչեւ 1907-ի ամառը հարկադրաբար Թաւրիզ մնացած եւ Սեպուհի կրթական գործը ամբողջացուցած Ծիկահերը⁷⁹, դպրոցական տարեշրջանի աւարտով, իբրեւ լիազօր ներկայացուցիչը իր կուսակցութեան՝ անմիջապէս կը մեկնի Պուլկարիա, ուր Վառնայի մէջ բանակցութիւններ կը վարէ Հմայեակ Խուշպուլեանի գլխաւորած հնչակեան խմբակցութեան հետ, որ ինքզինքին համար որդեգրած էր Յեղափոխական Միութիւն անունը:

Բանակցութիւնները 1907 Օգոստոսին կը յանգին արմենականներու եւ միութենականներու միութեան՝ *Գաղափարակցական Միութիւն* անունով եւ ուրոյն ծրագրով⁸⁰: Ինչպէս անուանումէն ի յայտ կու գայ՝ գաղափարական նոյնութիւնն էր որ կարելի կը դարձնէր երկու անջատ կազմակերպութիւններու միաձուլումը:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Եգիպտոսի չափա-

⁷⁸ Համբարեան Ա. Ս., «Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականութիւնը եւ ազատագրական շարժումները արեւմտեան Հայաստանում», Երեւան, 1979, էջ 126–128:

⁷⁹ Խոստիկեան Գալուստ, «Արմենական Կուսակցութեան 75 ամեակին առթիւ», «Պայքար» օրաթերթ, 7 Դեկտ. 1960:

⁸⁰ Նաթանեան Միքայէլ, «Ռամկավար Կուսակցութեան կազմութեան պարագաները», «Եգիպտահայ տարեցոյց», 1925, էջ 164–165:

ւորական թելի վարիչները, 1907 Մեպտ. 4 թուակիր պաշտօնագրով, ինչպէս կը գրէ Մ. Նաթանեան, կը շնորհաւորեն նորակազմ Միութիւնը եւ փափաք կը յայտնեն որ իրենց հետ եւս միութիւն յառաջ բերելու նպատակով լիազօրներ նշանակուին, մանաւանդ որ, ըստ յիշեալ նամակին, «կարելոր տարբերութիւն մը չկար երկու կազմակերպութեանց հայեացքներուն միջեւ»⁸¹:

Շարունակենք հետեւիլ Նաթանեանի տեղեկութիւններուն:

Գաղափարակցական Միութիւնը 12 եւ 15 Հոկտ. 1907 թուակիր նամակներով կ'ընդունի իրեն եղած առաջարկը եւ իր կողմէ լիազօր կը նշանակէ Ծիկահերը, որ 1907 Դեկտ.ին կը հասնի Ադեքսանդրիա: Հոն, իբրեւ խորհրդական, Ծիկահերի կը միանան Մ. Նաթանեանն ու Յարութիւն Պէյլերեանը եւ ծայր կու տան բանակցութիւնները վերակազմեալ հնչակեաններու կեդրոնական յանձնախումբի լիազօր ներկայացուցիչներ Միհրան Տամատեանի, Տոքթ. Տիգրան Էնֆիէճեանի, Կարապետ Գրիգորեանի, Շաւարշ Հովիւեանի եւ Ժիրայր-Վաչէի հետ:

Բանակցութիւնները, որոնք պաշտօնապէս կը սկսին 1908 Փետր. 5-ին, Ադեքսանդրիոյ մէջ, Միհրան Տամատեանի բնակարանը տեղի կ'ունենային:

Մինչ այդ, միութիւն յառաջացնելու ուղղութեամբ իրենց գրաւոր բաղձանքները յայտնած էին Նաեւ Վեր. Հնչ. Կուսակցութեան Ամերիկայի Նահանգային Վարչութիւնն ու Կիլիկիոյ վերակազմեալները:

Բանակցութիւնները կը յանգին յաջող արդիւնքի եւ 1908 Մեպտ. 15ին, Գր. Պէօզիկեանի, Միք. Նաթանեանի, Մ. Տամատեանի, Կար. Գրիգորեանի ու Շ. Հովիւեանի ստորագրած համաձայնագրով կը յայտարարուի կազմութիւնը *Միացեալ հայ Յեղափոխական Կազմակերպութեան*:

Բանակցութիւններու եզրափակիչ արձանագրութեան մէջ, ի միջի այլոց, կը նշուէր.

«Բանակցող երկու կողմերն ալ կ'առաջնորդուէին հաստատ համոզումով թէ Տանկահայ ժողովուրդին ներկայ ճգնաժամային

⁸¹ Անդ:

դրութեան հանդէպ, հայ յեղափոխական գործը կը կարօտէր անելիք քան երբեք մեծ ճիգերու եւ միահամուռ գործակցութեան: Անհրաժեշտ էր ուրեմն որ Տաճկահայ դատին համար կազմուած անջատ կուսակցութիւններ ի մի համախմբուէին եւ միացնէին իրենց ջանքերը:

«Ուստի պէտք էր անպայման յառաջ բերել այդ ցանկալի միութիւնը, նոյնիսկ ի գին փոխադարձ ծանր զիջումներու:

«Այս զիջումներուն առաջինը անշուշտ միացող մարմիններուն անուններուն լքումը եւ նոր անունով մը հրապարակ գալն էր, զիջում որուն յօժարակամ համաձայնեցան բանակցութեանց լիազօրները, առանց կանգ առնելու այն նկատումին վրայ թէ պատմական կապերու եւ յիշատակներու երկար շարք մը նուիրագործած էր իւրաքանչիւրին համար իր կուսակցութեան անունը: Եթէ հայրենիքին եւ հայութեան ընդհանուր եւ գերագոյն շահերը պէտք էր վեր նկատել կուսակցական որեւէ նկատումէ կամ հաշիւէ, ապա ուրեմն եւ միութեան սուրբ անունը եւ անոր համազգային դրօշը պէտք էր անպայման վեր բռնել ամէն անունէ եւ ամէն հատուածական դրօշէ:

«Լիազօրները Միացեալ Կազմակերպութեան նպատակը սահմանեցին հետեւեալ կերպով.

«Ազատել Տաճկահայաստանը օսմանեան բռնակալութենէն ու հիմնել այնտեղ անկախ կառավարութիւն մը, հաստատուած սահմանադրական լայն հիմերու վրայ, որ ապահովէր միանգամայն այնտեղ ապրող միւս բոլոր ցեղերուն բարօրութիւնը եւ ազատ ու խաղաղ մշակութային զարգացում մը, համաձայն իրենց առանձնաշատուկ ընդունակութեանց:

«Բացայայտ է ուրեմն որ ինքնավար Հայաստանին մէջ հայերուն հետ միւս բոլոր ցեղերն ալ, պահելով հանդերձ իրենց ազգային ինքնութիւնութիւնը, իրաւունք պիտի ունենան անխտիր մասնակցելու երկրին ընդհանուր վարչական եւ օրէնսդրական գործերուն:

«Կազմակերպութիւնը իր այս հիմնական նպատակին իրագործումը հետապնդելով հանդերձ, կը ջանայ քաղաքական համագամանքներու համաձայն վարչական բարենորոգումներ ձեռք բերել Տաճկահայաստանի մէջ, հիմնուելով Եւրոպական պետութիւններէն հաստատուած

միջազգային դաշնագրություններու վրայ»⁸²:

Օսմանեան կեղծ Սահմանադրութեան հռչակումով ստեղծուած նոր պայմանները, սակայն, դուռ կը բանան նոր բանակցութիւններու՝ Մ. Հ. Յ. Կ.ի եւ Եգիպտոս բնակող մտաւորականներու կամ դիրքի տէր անձնաւորութիւններու միջեւ, որոնք 1908 Հոկտ. 31-ին կը յանգին Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան հռչակման⁸³:

Ռ. Ա. Կ.ի Կեդրոնական Արխիւին մէջ գտնուող փաստաթուղթի մը մէջ,– որ 10 Դեկտ. 1908-ին Գահիրէի մէջ գումարուած ընդհանուր անդամական ժողովի մը ատենագրութիւնն է՝ ստորագրուած եւ կնքուած վեր. հնչակեան ու արմենական լիազօրներու կողմէ,– կը նշուի թէ ժողովականները ուրախութեամբ կ'ողջունեն Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան կազմութիւնը եւ նոյն օրուրնէ իսկ լուծեալ կը համարեն Վեր. Հնչ. Յեղափոխական Կուսակցութիւն ու Գաղափարակցական Միութիւն անունով ուրոյն կամ միացեալ մասնաճիւղերու գոյութիւնն ու անունները:

Այսպիսով, յստակօրէն կը տեսնենք թէ Արմենական Կուսակցութիւնն իբրեւ անուն եւ ուրոյն կազմակերպութիւն գործած կրնայ ըլլալ առաւելագոյնը մինչեւ 1909-ի սկիզբը, թէեւ կայ արձանագրութիւն այն մասին՝ թէ 1908-ին Վասպուրականի գիւղերէն Բելուի մէջ, օրինակ, ժողովուրդին տեղեկութիւններ տրուած են Հ. Մ. Ռ.Կ.ի մասին⁸⁴, լուսաբանելու համար Արմենականութեան աղերսը այս նորակազմ կուսակցութեան հետ:

Նոյնպէս յստակօրէն կը տեսնենք թէ Արմենական Կուսակցութիւնը թէեւ իբրեւ անուն եւ ուրոյն կազմակերպութիւն պաշտօնապէս կը դադրի գոյութիւն ունենալէ 1908-ին, սակայն իբրեւ ուղղութիւն կը շարունակէ իր գոյութիւնը նոր անունի տակ:

Տեղին է նշել թէ արմենականներու Ծրագրին ու անոր կցուած

⁸² Դարբինեան Ա., նշ. աշխ., էջ 187–188:

⁸³ Այս մասին ընդարձակօրէն կարդալ Ա. Դարբինեանի նշուած աշխատութեան 185–204 էջերը:

⁸⁴ Տէր Մկրտիչեան Անուշաւան, «Յուշեր Վանի անցեալէն», «Պայքար» օրաթերթ, 24 Յուլիս 1959:

լուսաբանական յաւելուածին բաղդատութիւնը Միացեալ Հայ Յեղափոխական Կազմակերպութեան յայտարարութեան հետ՝ երեւան կը բերէ բազմաթիւ նմանութիւններ սկզբունքային գլխաւոր հարցերու շուրջ, որոնք կը վերաբերին ռամկավարութեան, այլ ցեղերու հետ համերաշխ գործակցութեան, Հայ Դատի հետապնդման համար առանց դասակարգային խտրութեան հայութեան բոլոր կենսունակ տարրերու համախմբումին, կազմակերպեալ ինքնապաշտպանութեան, նպաստաւոր պահուն ընդհանուր ապստամբութեան դիմելուն, վաղաժամ ցոյցերէ կամ մասնակի շարժումներէ զգուշանալուն եւլն.:

Մեր նպատակէն դուրս կը մնայ անդրադառնալը 1921-ին Ռամկավար Ազատական կուսակցութեան վերածուած Հ. Ս. Ռ. Կ.ի դաւանանքին, գործելակերպին եւ պատմութեան:

* * *

ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեր այս ուսումնասիրության մեջ, որ սովորական առումով պատմագրություն մը չէ, այլ՝ քննական-համադրական համեստ ճիգ մը, փորձեցինք անդրադարձած ըլլալ Արմենական Կուսակցության պատմության առնչուող վիճելի ու վիճարկելի կարգ մը հարցերու՝ Արմենական Կազմակերպության հիմնադրության 100-ամեակին առթիւ:

Հայ քաղաքական այս առաջին կուսակցության հիմնադրութեամբ մեր ժողովուրդին ազգային ազատագրական պայքարը կը մտնէ նոր հունի մը մէջ - առաւել գիտակից ու կազմակերպ եւ համախումբ պայքար՝ յանուն բռնագրաւեալ հողերու ազատագրության եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան:

Հայ քաղաքական անդրանիկ կուսակցության հիմնադրութիւնը՝ իբրեւ պատմական անկիւնադարձային իրողութիւն՝ կը կազմէ համազգային տարողութեամբ նշելի երեւոյթ մը, եւ այս համեստ փորձը կը միտի նաեւ այս առումով Արմենականութեան վրայ հրաւիրելու ուշադրութիւնն ուսումնասիրողներու:

* * *

